ՍԻԵՏՍՐՍԵ

ԸՍՏ ՅՈՒԱՆՆՈՒ

1885
22
Ս-79

У-5 к24

Шрифтъ Дрезденъ [illegible]
изобрѣтенъ и сдѣланъ [illegible]

22
Հ-79
56

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ

ԽՆԱՄՕՔ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՅՈՅՆ ԲՆԱԳԻԷ

1000
97870

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله
۱۰ رجب ۳۰۲ و ۱۳ نیسان ۳۰۱ نومرو ۱٤٥
مصارف انکلیز بیبل شرکتی طرفندن تسویه اولنه‌رق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻԻԲ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՅ

ՀԱԽՀ – 1885

Գեր. Հայոց Ազգային Գրադարան
Հայ. Ա. Մեսրոպյան

11408
122-ԱՐ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկզբումն էր բանը՝ և բանն Աստու-
2 ծոյ մօտ էր՝ և Աստուած էր Բանը։ Նա
3 սկզբումն Աստուծոյ մօտ էր։ Ամեն
ինչ նորանով եղաւ, և առանց նորան
4 ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ։ Նորանով
էր կեանք, և կեանքը մարդկանց լոյսն
5 էր։ Եւ լոյսը խաւարումը լոյս է տա-
լիս, և խաւարը չիմացաւ նորան։
6 Մի մարդ եղաւ Աստուածանից ու-
7 ղարկուած, անունը Յօհաննէս։ Սա
վկայութեան համար եկաւ, որ այն
Լուսոյ համար վկայէ՝ որ ամենքը նո-
8 ցանով հաւատան։ Նա չէր Լոյսն, այլ
որ Լուսոյն համար վկայէ։
9 Էր ճշմարիտ Լոյսն, որ ամեն մար-
դուն լուսաւորում է, որ գալիս է աշ-

10 խարհ.քը։ Աշխարհ.քումն էր, և աշ-
խարհ.քը նորանով եղաւ, և աշխարհ-
11 .քը նորան չճանաչեց։ Իրաններին մէջ
եկաւ, և իրանները նորան չընդունե-
12 ցին։ Բայց որոնք որ նորան ընդունե-
ցին, իշխանութիւն տուաւ նորանց
Աստուծոյ որդիք լինելու՝ նորանց, որ
13 նորա անունը հաւատում են։ Որոնք
ոչ արիւնից և ոչ մարմնոյ կամքից, և
ոչ մարդոյ կամքից, այլ Աստուածա-
14 նից ծնուեցան։ Եւ բանը մարմին ե-
ղաւ՝ և բնակեց մեր մէջ. և նորա
փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից եղած
միածնի փառք. շնորհ.քով և ճշմար-
տութիւնով լիքն։
15 Յոհաննէս վկայում է նորա հա-
մար. և աղաղակեց և ասաց. Սա էր,
որի համար ասում էի. Ով ինձանից
յետոյ եկողը, ինձանից առաջ եղաւ.
16 վասն զի ինձանից առաջ էր։ Եւ նո-
րա լիութիւնից մենք ամենքս առինք
17 շնորհ.ք շնորհ.քի տեղ։ Քանզի օրէնքը
Մովսէսի ձեռովը տրուեցաւ. շնորհ.քը
և ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի
18 ձեռովն եղաւ։ Աստուծոյն ոչ ով եր-

բէք չէ տեսել. Բայց միածին Որդին,
Հօր ծոցումը լինողը, նա պատմեց։
19 Եւ այս է Յոհաննէսի վկայութիւ-
նը, երբոր Հրէաներն Երուսաղէմից
քահանաներ և Ղեւտացիներ ուղար-
կեցին նորա մօտ, որ հարցնեն նո-
20 րան. Ով դու ո՞վ ես։ Եւ նա խոստո-
վանեցաւ և չուրացաւ. և խոստո-
վանեցաւ. Թէ ես չեմ Քրիստոսը։
21 Եւ նորան հարցրին. Ապա ո՞վ. Եղի-
ա՞ն ես. և ասաց. Չեմ. Մարգարէ՞ն
22 ես դու. և պատասխանեց. Ոչ։ Արդ
ասացին նորան. Ապա ո՞վ ես, որ պա-
տասխան տանք մեզ ուղարկողներին.
23 Ի՞նչ ես ասում քեզ համար։ Ասաց.
Ես եմ ձայն կանչողի անապատումը,
Ուղղեցէք Տիրոջ ճանապարհը, ինչ-
24 պէս Եսայի մարգարէն ասաց։ Եւ ու-
ղարկուածները փարիսեցիներից էին։
25 Եւ նորան հարցրին և ասացին. Ա-
պա ինչու՞ ես մկրտում, եթէ դու ոչ
Քրիստոսն ես և ոչ Եղիան, և ոչ
26 մարգարէն։ Յոհաննէսը պատասխա-
նեց նորանց և ասաց. Ես ջրով եմ
մկրտում. բայց ձեր միջումը կայ Ե-

27 կը, որին դուք չէք դիտում։ Նա է
ինձանից յետոյ եկողը, որ ինձանից
առաջ եղաւ. որ ես արժանի չեմ, նորա
28 կօշիկների կապը արձակելու։ Սա Բե-
թաբարայումն եղաւ, Յորդանանի այն
կողմը. ուր Յոհաննէսը մկրտում էր։
29 Հետեւեալ օրը Յոհաննէս տեսնում
է Յիսուսին իրան մօտ գալիս, և ա-
սում է. Ահա Աստուծոյ Գառն, որ
30 վեր է առնում աշխարհքի մեղքը։ Սա
է, որի համար ես ասում էի, Ետ ին-
ձանից յետոյ մի մարդ է գալիս, որ
ինձանից առաջ եղաւ, վասն զի ին-
31 ձանից առաջ էր։ Եւ ես նորան չէի
դիտում. այլ որ յայտնի լինի Իսրա-
յէլին, նորա համար ես եկայ ջրով
32 մկրտելու։ Եւ վկայեց Յոհաննէսը և
ասաց. Թէ տեսնում էի Հոգին, որ
աղաւնու պէս վայր էր գալիս երկն-
33 քից և նորա վերայ մնում։ Եւ ես
չէի դիտում նորան. բայց նա որ ին-
ձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ասաց
ինձ. Թէ Որի վերայ որ տեսնես Հո-
գին վայր գալիս և նորա վերայ մը-
նում, նա է Սուրբ Հոգով մկրտողը։

34 Եւ ես տեսայ և վկայեցի, Թէ Սա է
Աստուծոյ Որդին։
35 Հետեւեալ օրն դարձեալ կանգնած
էր Յոհաննէսը, և նորա աշակերտնե-
36 րից երկուսը։ Եւ մտիկ տուաւ Յի-
սուսին, որ ման էր գալիս, և ասաց.
37 Ահա Աստուծոյ Գառն։ Եւ այն երկու
աշակերտները լսեցին նորանից՝ որ խօ-
սում էր, և Յիսուսի ետեւից գնա-
38 ցին։ Յիսուսն էլ դարձաւ նորանց տե-
սաւ, որ գնում էին իր ետեւից, և
ասաց նորանց. Ի՞նչ էք ուզում. նո-
րանք ասացին նորան. Ռաբբի, (որ
թարգմանուած ասվում է՝ վարդա-
39 պետ.) ո՞րտեղ ես կենում։ Նորանց ա-
սաց. Եկէք և տեսէք. եկան և տեսան
Ետ որտեղ էր կենում. և այն օրը նորա
մօտ մնացին. ժամն էլ տասնի մօտ
40 էր։ Անդրէասը՝ վէմ Սիմոնի եղբայրն՝
այն երկուսից մէկն էր, որ Յոհաննէ-
սիցը լսեցին և նորա ետեւից գնա-
41 ցին։ Սա առաջ իր Սիմոն եղբօրն է
գտնում և նորան ասում. Մեսիան
գտել ենք, (որ թարգմանվում է Քրիս-
42 տոս)։ Եւ բերաւ նորան Յիսուսի մօտ.

ցիսուսն էլ Նորան մտիկ տուաւ և ա-
սաց. Դու Սիմոնն ես՝ Յոնանի որ-
դին. դու պիտի կոչուիս Կեփաս, (որ
թարգմանվում է Պետրոս։)
43 Հետեւեալ օրը կամեցաւ Յիսուսը
դուրս գնալ Գալիլեա. և գտնում է
Փիլիպպոսին, և ասում Նորան. Իմ
44 ետեւից եկ։ Փիլիպպոսն էլ Բեդսա-
յիդայիցն էր՝ Անդրէասի և Պետրոսի
45 քաղաքիցը։ Փիլիպպոսն էլ գտնում
է Նաթանայէլին և ասում Նորան. Նա
որի մասին գրեց Մովսէս օրէնքումը,
և մարգարէներն էլ, գտանք՝ Յոսէփի
46 որդի Յիսուսին՝ Նազարէթից։ Եւ
Նաթանայէլ Նորան ասաց. Կարելի՞ է
Նազարէթից մի բարի բան լինել. Փի-
լիպպոսը Նորան ասաց. Եկ և տես։
47 Յիսուսը տեսաւ Նաթանայէլին իրան
մօտ գալիս՝ և ասաց Նորա համար.
Ահա ճիշդ Իսրայէլացի, որում նեն-
48 գութիւն չկայ։ Նաթանայէլ ասում
է Նորան. Ի՞նչ տեղից ես ճանաչում
ինձ. Յիսուսը պատասխանեց և ասաց
Նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չկան-
չած, քեզ տեսայ որ թզենու տակն

49 էիր։ Նաթանայէլ պատասխանեց և
ասաց. Ռաբբի, դու Աստուծոյ Որ-
դին ես. Դու ես Իսրայէլի թագա-
50 ւորը։ Յիսուսը պատասխանեց և ա-
սար Նորան. Որովհետեւ ասացի քեզ
թէ թզենու տակ տեսայ քեզ, հաւա-
տում ես, սորանցից էլ աւելի մեծ
51 բաներ կ'տեսնես. Եւ Նորան ասաց.
Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ,
այսուհետեւ կ'տեսնէք երկինքը բաց-
ուած, և Աստուծոյ հրեշտակներին ել-
լելիս և իջնելիս Որդոյ մարդոյ վերայ։

Գլ. Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլ-
եայի Կանայումը, և Յիսուսի մայրն
2 այնտեղ էր։ Յիսուսն էլ կանչուեցաւ
այն հարսանիքը և Նորա աշակերտ-
3 ներն էլ։ Եւ երբոր գինին պակասեց,
Յիսուսի մայրը ասաց Նորան. Գինի
4 չունին։ Յիսուսը Նորան ասաց. Քեզ
ի՞նչ բան կայ ինձ հետ կին. իմ ժա-
5 մանակը դեռ չէ հասել։ Նորա մայրն
ասաց սպասաւորներին. Ինչ որ ասէ
6 ձեզ, արէք։ Այն տեղ վեց քարէ կարաս

կային Հրէաների մաքրուելու համար,
որոնցից ամեն մէկը երկու կամ երեք
7 մաթ էին տանում։ Յիսուսը նորանց
ասաց. Այդ կարասները լցրէք.
8 և նորանց լցրին մինչեւ վեր։ Եւ նո-
րանց ասաց. Հիմա առէք և տարէք
սեղանապետի համար. և նորանք տա-
9 րին։ Եւ երբոր վերակացուն այն գի-
նի դառած ջուրը ճաշակեց, (և չէր
դիտում թէ ինչ տեղից է. բայց սպա-
սաւորները դիտէին՝ որ ջուրն լցրել
էին) սեղանապետը փեսային կանչեց,
10 Եւ նորան ասաց. Ամեն մարդ առաջ
լաւ գինին է տալիս. և երբոր ար-
բենան, այն ժամանակ վատը. դու
լաւ գինին մինչեւ հիմա պահեցիր։
11 Նշանների սկիզբը Յիսուս այս արաւ
Գալիլեայի Կանայումը. և իր փառքը
յայտնեց. և նորա աշակերտները հա-
ւատացին նորան։
12 Յորանից յետոյ Յիսուսն իջաւ Կա-
փառնայում, ինքն և իր մայրը և իր
եղբայրները և իր աշակերտները, և
շատ օրեր չմնացին այնտեղ։
13 Եւ Հրէից զատիկը մօտ էր, և Յի-

14 սուսն եկաւ Երուսաղէմ։ Եւ տաճա-
րումը գտաւ եզներ և ոչխարներ և
աղաւնիներ ծախողներին, և սեղա-
15 նաւորներին նստած։ Եւ չուանից խա-
րազան շինեց, և ամենին տաճարից
դուրս հանեց՝ ոչխարներն էլ և եզ-
ներն էլ, և սեղանաւորների դրամները
16 ցրուեց և տախտակները կործանեց։ Եւ
աղաւնի ծախողներին ասաց. Դորանց
վեր առէք այստեղից. իմ Հօր տունը
17 մի անէք առուտուրի տուն։ Եւ նորա
աշակերտները յիշեցին, թէ գրուած
է. Քո տան նախանձը կերաւ ինձ։
18 Արդ Հրէաները պատասխանեցին և
ասացին նորան. Ի՞նչ նշան ես ցոյց
19 տալիս մեզ, որ անում ես այդ։ Յի-
սուսը պատասխանեց և ասաց նորանց.
Քանդեցէք այդ տաճարը, և երեք օր-
20 ում կ'կանգնեցնեմ դորան։ Հրէա-
ներն էլ ասացին. Այս տաճարը քա-
ռասուն և վեց տարում շինուեցաւ,
և դու երեք օրումն կ'կանգնեցնե՞ս
21 դորան։ Բայց նա իր մարմնոյ տաճա-
22 րի համար էր ասում։ Այսպա երբոր
նա մեռելների միջից յարութիւն ա-

ռաւ, նորա աշակերտները յիշեցին,
թէ նա ասաց նորանց այս բանը. և
հաւատացին գրքին՝ և այն խօսքին
որ ասաց Յիսուսը։
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր, զատ-
կի տօնին, շատ մարդիկ հաւատացին
նորա անուանը. տեսնելով նորա այն
24 նշանները, որ անում էր։ Բայց ինքն
Յիսուս իր անձը չէր հաւատում նո-
րանց. քանզի ինքն ամենը գիտէր։
25 Եւ որովհետեւ պէտք չէր որ մէկը
վկայէր մարդու համար. քանզի ինքը
գիտէր, Թէ ինչ կար մարդումը։

Գլ. Գ

1 Եւ փարիսեցիներից մի մարդ կար՝
անունը Նիկոդիմոս՝ Հրէաների իշխան։
2 Սա գիշերը Յիսուսի մօտ եկաւ և ա-
սաց նորան. Ռաբբի, գիտենք որ Աս-
տուածանից վարդապետ ես եկել.
քանզի ոչ ով չէ կարող այդ նշաններն
անել՝ որ դու ես անում, եթէ Աստ-
3 ուած նորա հետ չլինի։ Յիսուսը պա-
տասխանեց և ասաց նորան. Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ քեզ. Եթէ մէկը

վերստին չծնուի կարող չէ Աստուծոյ
4 արքայութիւնը տեսնել։ Նիկոդիմոս
նորան ասաց. Մարդ ի՞նչպէս կարող
է ծնուիլ՝ որ ծեր է. մի՞թէ կարող
է երկրորդ անգամ իր մօր արգան-
5 դը մտնել և ծնուիլ։ Յիսուս պատաս-
խանեց. Ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ քեզ. Եթէ մէկը ջրից և Հոգուց
չծնուի, նա կարող չէ Աստուծոյ ար-
6 քայութիւնը մտնել։ Մարմնուցը ծըն-
ուածը մարմին է. և Հոգուցը ծըն-
7 ուածը հոգի է։ Մի զարմանար՝ որ
ասացի քեզ. Թէ Պէտք է ձեզ վե-
8 րըստին ծնուիլ։ Քամին որտեղ ուզում
է՝ փչում է, և նորա ձայնը լսում
ես. բայց չգիտես թէ ո՞րտեղից է
գալիս և ո՞րտեղ է գնում. այսպէս
9 է ամեն Հոգուցը ծնուածը։ Նիկոդի-
մոսը պատասխանեց և ասաց նորան.
10 Այդ ի՞նչպէս կարող է լինիլ։ Յի-
սուսը պատասխանեց և ասաց նորան.
Դու ես Իսրայելի վարդապետը, և
11 այս չե՞ս գիտում։ Ճշմարիտն ճշմա-
րիտն ասում եմ քեզ. Թէ ինչ որ
գիտում ենք՝ խօսում ենք, և ինչ որ

տեսանք՝ վկայում ենք. և մեր վկա-
12 յութիւնը չէք ընդունում։ Եթէ երկ-
բաւոր բաներն ասացի ձեզ, և չէք
հաւատում. ապա ի՞նչպէս կ'հաւա-
տաք, եթէ երկնաւոր բաներն ասեմ։
13 Եւ ոչ ով վեր չելաւ երկինքը, եթէ
ոչ երկնքից իջնողը՝ Որդին մարդոյ՝
14 նա որ երկնքումն է։ Եւ ինչպէս Մո-
սէս օձը բարձրացրեց անապատումը,
այնպէս պէտք է մարդոյ Որդոյն բարձ-
15 բացուել. Որ ամեն նորան հաւատա-
ցողը չկորչի, այլ յաւիտենական
16 կեանքն ունենայ։ Վասն զի Աստուած
այնպէս սիրեց աշխարհքը, որ իր
միածին Որդին տուաւ. որ ամեն նո-
րան հաւատացողը չկորչի, այլ յա-
17 ւիտենական կեանքն ունենայ։ Քանզի
Աստուած իր Որդին չուղարկեց աշ-
խարհքը, որ աշխարհքին դատէ, այլ
18 որ աշխարհքը նորանով փրկուի։ Նո-
րան հաւատացողը չի դատապար-
տուիլ, իսկ չհաւատացողն արդէն
դատապարտուած է. որովհետեւ չհա-
ւատաց Աստուծոյ միածին Որդոյ ա-
19 նուանը։ Եւ սա է դատաստանն, որ

լոյսն եկաւ աշխարհքը, և մարդիկ
խաւարն աւելի սիրեցին քան թէ
լոյսն, վասն զի նորանց գործքերը
20 չար էին։ Քանզի ամեն չար գործողը
ատում է լոյսին, և չէ գալիս դէպի
լոյսն, որ նորա գործքերը չյանդի-
21 մանուին։ Իսկ ճշմարտութիւն գոր-
ծողը գալիս է դէպի լոյսն, որ նորա
գործքերն յայտնուին, վասն զի Աս-
տուծով գործուեցան։
22 Յորանից յետոյ եկաւ Յիսուսը և
նորա աշակերտները Հրէաստանի երկ-
կիրը. և այն տեղ նորանց հետ մնա-
23 ցի գալիս և մկրտում էր։ Եւ Յո-
հաննէսն էլ Այնոնումն էր մկրտում՝
Սաղեմայ մօտ. որովհետեւ այնտեղ
շատ ջուր կար. և գալիս էին և մը-
24 կրտվում էին։ Վասն զի Յոհաննէսը
դեռ բանտի մէջ չէր դցուած։
25 Արդ Յոհաննէսի աշակերտները Հր-
էաստանի հետ վէճ ունեցան մաքրու-
26 թեան համար։ Եւ Յոհաննէսի մօտ
եկան և ասացին նորան. Ռաբբի, նա
որ Յորդանանի այն կողմումն էր քեզ
հետ, որի համար դու վկայեցիր, ա-

հա նա մկրտում է, և ամենքը նորա
27 մօտ են գալիս։ Յօհաննէսը պատաս-
խանեց և ասաց. Մարդ չէ կարող
ոչինչ վեր առնել, եթէ երկնքից
28 տրուած չլինի նորան։ Դուք ինքներդ
վկայում էք ինձ համար, որ ասացի
ձեզ. թէ ես Քրիստոսը չեմ, այլ
թէ նորա առջեւից ուղարկուած եմ։
29 Հարսն ունեցողն է փեսայ. բայց փե-
սայի բարեկամը, որ կանգնած է և
լսում է նորան, ուրախութիւնով ու-
րախանում է փեսայի ձայնի համար.
արդ իմ այս ուրախութիւնը լցուած
30 է։ Նորան պէտք է աճել, և ինձ փոք-
31 րանալ։ Վերեւից եկողն ամենից վեր
է. երկրիցը լինողը երկրիցն է և երկ-
32 րիցն է խօսում։ Երկնքից եկողն ա-
մենից վեր է. ինչ որ տեսաւ և լսեց,
նա է վկայում. և նորա վկայութիւնը
33 ոչ ով չէ ընդունում։ Նորա վկայու-
թիւնն ընդունողը կնքեց, թէ Աստ-
34 ուած ճշմարիտ է։ Քանզի նա որին
Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն
է խօսում. վասն զի Աստուած Հոգին
35 չափով չէ տալիս։ Հայրը սիրում է

Որդոյն, և ամեն բան նորա ձեռքն է
36 տուել։ Որդոյն հաւատացողը յաւի-
տենական կեանք ունի. իսկ Որդոյն
չհնազանդողը կեանքը չի տեսնիլ, այլ
Աստուծոյ բարկութիւնը մնում է նո-
րա վերայ։

ԳԼ. Դ

1 Եւ երբոր Տէրն իմացաւ, որ փարի-
սեցիները լսեցին, թէ Յիսուսը ա-
ւելի աշակերտներ է անում և մկըր-
2 տում քան թէ Յօհաննէսը։ (Թէպէտ
և Յիսուս ինքն չէր մկրտում՝ այլ նո-
3 րա աշակերտները.) Հրէաստանի եր-
կիրը թողեց և դարձեալ եկաւ Գա-
4 լիլեա։ Եւ պէտք էր որ Սամարիա-
5 յի միջովն անցնէր։ Արդ նա Սամա-
րիայի մի քաղաքն եկաւ, անունը
Սիւքար, այն տեղի մօտ, որ Յակոբ
6 տուաւ իր որդի Յոսէփին։ Եւ Յա-
կոբի մի աղբիւրը կար այնտեղ. և
Յիսուսը ճանապարհից վաստակած
այն աղբիւրի վերայ նստեց. և ժամը
վեցին դեմ էր։
7 Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ

ջուր հանէ։ Յիսուսը նորան ասաց։
8 Ինձ ջուր տուր խմեմ։ Վասն զի նո-
րա աշակերտներն քաղաքն էին գնա-
9 ցել, որ կերակուր առնեն։ Սամա-
րացի կինն էլ ասաց նորան։ Դու որ
Հրէայ ես, ի՞նչպէս ես ինձանից ջուր
ուզում խմել, որ մի Սամարացի կին
եմ։ որովհետեւ Հրէաները չեն խառ-
10 նըվում Սամարացոց հետ։ Յիսուսը
պատասխանեց և ասաց նորան։ Եթէ
Աստուծոյ պարգեւը գիտենայիր, և
թէ ով է նա, որ քեզ ասում է, Ըն-
տուր ինձ խմել, ապա դու նորանից
կ'խնդրէիր, և նա կենդանի ջուր կը-
11 տար քեզ։ Կինը նորան ասաց։ Տէր,
դու դոյլ էլ չունիս, և հորը խոր է։
ապա ո՞րտեղից ունիս կենդանի ջու-
12 ը։ Մի՞թէ դու աւելի մեծ ես քան
մեր Հայր Յակոբը, որ այս հորը
տուաւ մեզ։ և ինքն սորանից խմեց,
և նորա որդիքը և նորա անասուն-
13 ները։ Յիսուսը պատասխանեց և ա-
սաց նորան։ Ամեն այդ ջրից խմողը
դարձեալ կ'ծարաւի։ բայց ով որ խմէ
այն ջրից, որ ես կ'տամ նորան, նա

14 յաւիտեան չի ծարաւիլ։ Այլ այն
ջուրն, որ ես կ'տամ նորան, ջրի
աղբիւր կ'լինի նորանում, որ յաւի-
15 տենական կենաց մէջ կ'բղխէ։ Կինը
նորան ասաց։ Տէր, տուր ինձ այն
ջուրը, որ չծարաւիմ, և չգամ այս-
16 տեղ ջուր հանելու։ Յիսուսը նորան
ասաց։ Գնա կանչիր քո մարդուն, և
17 եկ այստեղ։ Կինը պատասխանեց և
ասաց։ Ես մարդ չունիմ։ Յիսուսը
նորան ասաց։ Լաւ ասացիր, թէ
18 մարդ չունիմ։ Վասն զի դու հինգ
մարդ ես ունեցել, և նա որ հիմա
ունիս, քո մարդը չէ։ դա ճշմարիտ
19 ասացիր։ Կինը նորան ասաց։ Տէր,
տեսնում եմ որ դու մարգարէ ես։
20 Մեր հարքն այս լեռանումը երկրպա-
գութիւն արին։ և դուք ասում էք,
թէ Երուսաղէմումն է այն տեղն, ուր
21 պէտք է երկրպագութիւն անել։ Յի-
սուսը նորան ասաց։ Կին, հաւատայ
ինձ, որ ժամանակ կ'գայ, որ այն
ժամանակ ոչ այս լեռանումն կ'երկր-
պագէք Հօրը, և ոչ էլ Երուսաղէմու-
22 մը։ Դուք երկրպագում էք նորան,

որ չէք գիտում. մենք երկրպագում
ենք նորան, որ գիտում ենք. որով-
հետեւ փրկութիւնը Հրէաներից է։
23 Բայց ժամանակ կ'գայ, և հիմա է,
որ ճշմարիտ երկրպագողները հոգով
և ճշմարտութիւնով կ'երկրպագեն
Հօրը, քանզի Հայրն էլ այսպէս է ու-
24 զում իր երկրպագողներին։ Աստուած
Հոգի է, և նորան երկրպագողները
պէտք է հոգով և ճշմարտութիւնով
25 երկրպագեն։ Կինն ասաց նորան. Գի-
տեմ, որ Մեսիան պիտի գայ (որ
Քրիստոս է կոչվում). երբոր նա կը-
26 գայ, ամեն բան կ'պատմէ մեզ։ Ցի-
սուսը նորան ասաց. Ես եմ, որ քեզ
27 հետ խօսում եմ։ Եւ սորա վերայ ե-
կան նորա աշակերտները, և զարմա-
նում էին, որ կնոջ հետ խօսում էր.
բայց ոչ ոք չասաց. Ի՞նչ ես ուզում,
կամ ի՞նչ ես խօսում դորա հետ։
28 Կինն էլ իր կուժը թողեց, և գնաց
29 քաղաք, և մարդկանց ասաց. Եկէք
տեսէք մի մարդ, որ ինձ ասաց բո-
լորը ինչ որ գործել եմ. արդեօք նա
30 է Քրիստոսը։ Եւ դուրս ելան քաղա-
քից, և նորա մօտ էին գալիս։

31 Եւ այն միջոցին աշակերտները խընդ-
րում էին նորան և ասում. Ռաբբի,
32 կեր։ Նա էլ ասաց նորանց. Ես կերա-
կուր ունիմ ուտելու, որ դուք չէք դի-
33 տում։ Աշակերտներն էլ իրար ասում
էին. Արդեօ՞ք մի մարդ դորան բան
34 բերաւ ուտելու։ Ցիսուսը ասաց նո-
րանց. Իմ կերակուրը նա է, որ ինձ
ուղարկողի կամքն անեմ, և նորա
35 գործը կատարեմ։ Մի՞թէ դուք չէք
ասում. թէ դեռ չորս ամիս կայ, և
հունձքը կ'գայ. ահա ես ասում եմ
ձեզ. Բարձրացրէք ձեր աչքերը, և
տեսէք արտերը, որ սպիտակացել են
36 և արդէն հնձին հասել։ Եւ հնձողը
վարձք է առնում, և յաւիտենական
կենաց մէջ պտուղ ժողովում. որ սեր-
մողը և հնձողը իրար հետ ուրախա-
37 նան։ Քանզի սորանում ճշմարիտ է
այն խօսքը. թէ Ուրիշ է սերմողը, և
38 ուրիշ է հնձողը։ Ես ուղարկեցի ձեզ
հնձել այն, որ դուք չաշխատեցիք.
ուրիշներն աշխատեցին, և դուք նո-
րանց աշխատանքի մէջ մտաք։
39 Եւ Սամարացոց այն քաղաքից շա-

տերը հաւատացին Նորան այն կնոջ
խօսքի համար, որ վկայում էր. թէ
Աստց ինձ բոլորը ինչ որ գործել էի։
40 Արդ երբոր Սամարացիք Նորա մօտ
եկան, Նորան աղաչեցին, որ իրանց
մօտ մնայ. և երկու օր մնաց այն-
41 տեղ։ Եւ էլ շատերը հաւատացին Նո-
42 ր՚ան՝ Նորա խօսքի համար։ Եւ այն կը-
նոջ էլ ասում էին. թէ Այլ ևս քո
խօսքերի պատճառով չենք հաւա-
տում. վասն զի մենք ինքներս լսե-
ցինք, և գիտենք որ ճշմարտապէս սա
է աշխարհ.քի Փրկիչը՝ Քրիստոսը։
43 Եւ երկու օրից յետոյ այնտեղից
44 դուրս եկաւ գնաց Գալիլեա։ Վասն
զի Քրիստոս ինքն վկայեց. թէ Մար-
գարէն իր հայրենիքումը պատիւ չու-
45 նի։ Բայց երբոր Գալիլեա եկաւ, Գա-
լիլեացիներն ընդունեցին Նորան. տես-
նելով այն բոլորն, որ տօնին արաւ
Երուսաղէմումը. քանզի Նորանք էլ
եկել էին այն տօնին։
46 Եւ Յիսուսը դարձեալ եկաւ Գա-
լիլեայի Կանան, ուր ջուրը գինի ա-
րաւ. մի Թագաւորացեղ մարդ կար,

որի որդին Կափառնայումի մէջ հի-
47 ւանդ էր։ Նա լսելով թէ Յիսուսը
Հրէաստանից եկել է Գալիլեա. և-
կաւ Նորա մօտ և աղաչում էր, որ
իջնէ և իր որդուն բժշկէ. վասն զի
48 մեռնելու մօտ էր։ Յիսուսն էլ Նորան
ասաց. եթէ նշաններ և հրաշքներ
49 չտեսնէք՝ չէք հաւատալ։ Թագաւորա-
յեղը Նորան ասաց. Տէր, իջիր դեռ
50 քանի որ չէ մեռել տղան։ Յիսուսը
Նորան ասաց. Գնա, քո որդին կեն-
դանի է. և մարդը հաւատաց այն
խօսքին՝ որ Յիսուսը Նորան ասաց, և
51 գնաց։ Եւ դեռ որ իջնում էր, Նորա
ծառաները Նորան դիմաւորեցին և ա-
ւետիս տուին և ասացին. թէ քո տը-
52 ղան կենդանի է։ Նա էլ Նորանց հարց-
նում էր այն ժամի համար, ում սկը-
սեց լաւանալ. և Նորան ասացին, թէ
երէկ ժամը եօթնին տենդը թողեց
53 Նորան։ Այն ժամանակ հայրն իմա-
յաւ, թէ նոյն ժամին է, որ Յիսու-
սը Նորան ասաց. թէ քո որդին կեն-
դանի է. և հաւատաց ինքն և Նորա
54 բոլոր տունը։ Սա դարձեալ երկրորդ

նշան արաւ Յիսուսը, երբոր Հրէաս-
տանիցն եկաւ Գալիլեա։

ԳԼ. Ե

1 Սորանից յետոյ տօն էր Հրէաների.
2 և Յիսուսը վեր եաւ Երուսաղէմ։ Եւ
Երուսաղէմի մէջ Պրոբատիկէ աւազանի
մօտ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա է
3 կոչվում, հինգ սրահ կայ։ Նորանցում
խիստ շատ հիւանդներ կային՝ պառ-
կած. կոյրեր, կաղեր, չորացածներ,
որ ջրի շարժուելուն էին սպասում։
4 Վասն զի Տիրոջ հրեշտակը ժամանակ
ժամանակ վայր էր գալիս այն աւա-
զանը և ջուրը շարժում. և ջրի շար-
ժուելուց յետոյ նորա մէջ առաջ մըտ-
նողը բժշկվում էր՝ ինչ հիւանդու-
5 թիւն էլ որ ունենար։ Եւ այն տեղ
մի մարդ կար, որ երեսուն և ութ
6 տարի էր հիւանդութեան մէջ։ Երբոր
Յիսուսը նորան պառկած տեսաւ, և
գիտաց, թէ արդէն շատ ժամանա-
կից է, նորան ասաց. Կամենո՞ւմ ես
7 ողջ լինել։ Հիւանդը պատասխանեց
նորան. Տէր, մարդ չունիմ, որ՝ եր-

բոր ջուրերը շարժվում է՝ ինձ աւա-
զանի մէջ դցէ. և մինչեւ որ ես գա-
լիս եմ, ուրիշն ինձանից առաջ ի-
8 նում է մէջը։ Յիսուսը նորան ասաց.
Վեր կաց, մահիճդ առ և ման եկ։
9 Եւ մարդն իսկոյն ողջացաւ, և վեր
առաւ իր մահիճը և ման էր գալիս.
10 և օրը շաբաթ էր։ Հրէաներն էլ ա-
սացին բժշկուածին. Շաբաթ է. ար-
ժան չէ քեզ, որ մահիճդ վեր առ-
11 նես։ Նա պատասխանեց նորանց. Նա՝
որ ինձ բժշկեց, նա ասաց ինձ. Մա-
12 հիճդ առ և ման եկ։ Արդ հարցրին
նորան և ասացին. Ո՞վ է այն մարդն,
որ քեզ ասաց. Մահիճդ առ և ման
13 եկ։ Բայց բժշկուածը չէր գիտում,
թէ ո՞վ է. վասն զի Յիսուսը այնտե-
ղի ամբոխի պատճառովը խոյս տուաւ։
14 Սորանից յետոյ Յիսուսը նորան դը-
տաւ տաճարումը՝ և նորան ասաց.
Ահա ողջացար, այլ եւս չմեղանչես,
որ էլ աւելի չար բան չլինի քեզ։
15 Մարդը գնաց և Հրէաներին պատ-
մեց, թէ Յիսուսն է, որ նորան ա-
ռողջացրել է։

16 Եւ նորա համար Հրէաները Յիսու-
սին հալածում էին, և ուզում էին
նորան սպանել, որ շաբաթ օրն ա-
17 նում էր այն բանը։ Եւ Յիսուսը պա-
տասխանեց նորանց. Իմ Հայրը մին-
չեւ հիմա գործում է, և ես էլ գոր-
18 ծում եմ։ Նորա համար Հրէաներն
էլ աւելի ուզում էին սպանել նո-
րան. որ ոչ թէ միայն շաբաթ օրն
էր քանդում, այլ Աստուծոյն էլ ի-
19 րան Հայր էր ասում, իր անձն Աս-
տուծոյն հաւասար անելով։ Յիսուսը
պատասխանեց և ասաց նորանց. Ճըշ-
մարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ.
Որդին իրանից կարող չէ ոչինչ ա-
նել, թէ որ չտեսնէ Հօրն անելիս.
վասն զի ինչ որ նա անում է, հէնց
20 Որդին էլ այն բանը նորա նման է ա-
նում։ Վասն զի Հայրը սիրում է Որ-
դոյն, և ամեն բան ցոյց է տալիս
նորան, որ ինքն անում է, և սորան-
ցից էլ աւելի մեծ մեծ գործքեր ցոյց
կ'տայ նորան, որ դուք զարմանաք։
21 Վասն զի ինչպէս որ Հայրը մեռելնե-
րին յարուցանում է և կենդանի ա-

նում, այնպէս էլ Որդին, որոնց որ
կամենում է, կենդանի է անում։
22 Վասն զի Հայրը ոչ մէկին էլ չէ դա-
տում, այլ ամեն դատաստանը տուաւ
23 իր Որդոյն։ Որ ամենքը պատուեն
Որդոյն, ինչպէս որ պատուում են
Հօրը. Որդոյն չպատուողը՝ Հօրն էլ
չէ պատուում, որ ուղարկեց նորան։
24 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ,
թէ Իմ խօսքիս լսողը, և ինձ ուղար-
կողին հաւատացողը, յաւիտենական
կեանք ունի. և դատաստան չի մտա-
նել, այլ մահից փոխուեցաւ դէպի
25 կեանք։ Ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ ձեզ. թէ ժամանակ կ'գայ՝ և հի-
մա է, որ մեռելները Աստուծոյ Որ-
դոյն ձայնը կ'լսեն, և լսողները կ'ապ-
26 րին։ Քանզի ինչպէս որ Հայրն իր
անձումը կեանք ունի, այնպէս էլ Որ-
դոյն տուաւ՝ որ իր անձումն կեանք
27 ունենայ։ Եւ նորան իշխանութիւն
տուաւ, որ դատաստան էլ անէ. ո-
28 րովհետեւ Որդի մարդոյ է։ Սորա
վերայ մի զարմանաք. որովհետեւ
ժամանակ կ'գայ, որ ամենքն՝ որ գե-

րեղմաններուն են, նորա ձայնը կը
29 լսեն, եւ դուրս կ'գան, նորանք, որ
բարի են գործել, դէպի կենաց յա-
րութիւնը, եւ նորանք, որ չար են
արել, դէպի դատաստանի յարու-
30 թիւնը։ Ես ինձանից չեմ կարող ոչ-
ինչ անել. ինչպէս լսում եմ՝ այնպէս
եմ դատում, եւ իմ դատաստանն
արդար է. քանզի իմ կամքը չեմ ո-
րոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամ-
31 քը։ Եթէ ես ինձ համար վկայեմ,
32 իմ վկայութիւնը ճշմարիտ չէ։ Ու-
րիշն է որ ինձ համար վկայում է.
եւ գիտեմ որ ճշմարիտ է այն վկա-
յութիւնը, որ վկայում է ինձ հա-
33 մար։ Դուք ուղարկեցիք Յոհաննէսի
մօտ. եւ նա վկայութիւն տուաւ ճըշ-
34 մարտութեանը։ Իսկ ես ոչ թէ մարդ-
կանցից եմ առնում վկայութիւնը.
այլ սա ասում եմ, որ դուք ապ-
35 րիք։ Նա այն ճրագն էր՝ որ վառ-
վում էր եւ լոյս էր տալիս. եւ դուք
կամեցաք մի առ ժամանակ ուրախա-
36 նալ նորա լուսովը։ Բայց ես աւելի
մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յո-

հաննէսը, այսինքն այն գործքերն, որ
Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ նո-
րանց. նոյն այն գործքերն՝ որ գոր-
ծում եմ, ինձ համար վկայում են,
37 թէ Հայրն ուղարկեց ինձ։ Եւ ինձ
ուղարկող Հայրն ինքն ինձ համար
վկայեց. դուք ոչ նորա ձայնը լսե-
ցիք երբէք, եւ ոչ նորա կերպարանքը
38 տեսաք. Եւ ոչ նորա խօսքն ունիք
բնակած ձեզանում. վասն զի այն որ
նա ուղարկեց, դուք չէք հաւատում
39 նորան։ Քննեցէք գրքերն. որ դուք
կարծում էք թէ նորանցով ունիք
յաւիտենական կեանք՝ եւ նորանք են,
40 որ ինձ համար վկայում են։ Եւ չէք
կամենում ինձ մօտ գալ, որ կեանք
41 ունենաք։ Ես մարդկանցից փառք
42 չեմ առնում։ Բայց ճանաչում եմ
ձեզ, որ Աստուծոյ սէրը չունիք ձեր
43 անձներումը։ Ես իմ Հօր անունովն
եկայ, եւ ինձ չէք ընդունում. եթէ
ուրիշը գայ իր անունովն, նորան կ'ըն-
44 դունիք։ Ի՞նչպէս կարող էք դուք
հաւատալ, որ իրարից էք փառք առ-
նում, եւ այն փառքն որ միայն Աստ-

45 ուածանից է, չէք որոնում։ Մի կար-
ծէք, թէ ես Հօր մօտ կ'չարախօսեմ
ձեզանից։ կայ Դէլը որ ձեզանից չա-
րախօսում է՝ Մօսէսն, որի վերայ
46 դուք ձեր յոյսը դրել էք։ Վասն զի
եթէ դուք Մօսէսին հաւատայիք, ինձ
էլ կ'հաւատայիք, քանզի նա ինձ հա-
47 մար գրեց։ Բայց եթէ նորա գրքե-
րին չէք հաւատում, ի՞նչպէս իմ խօս-
քերին կ'հաւատաք։

ԳԼ. Զ

1 Սորանից յետոյ գնաց Յիսուսը Գա-
լիլեայի Տիբերեա ծովի միւս կողմը։
2 Եւ շատ ժողովուրդ գնում էր նորա
ետեւից, որովհետեւ տեսնում էին
նորա նշանները, որ անում էր հի-
3 ւանդների վերայ։ Յիսուսն էլ վեր
եաւ լեառը, և նստեց իր աշակերտ-
4 ների հետ այն տեղ։ Եւ Հրէաների
զատիկ տօնը մօտ էր։
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձրաց-
րեց և տեսաւ, որ շատ ժողովուրդ
էր գալիս իրան մօտ, ասաց Փիլիպ-
պոսին, Ի՞նչ տեղից հաց առնենք,

6 որ դորանք ուտեն։ Բայց այս ասաց՝
նորան փորձելով, վասն զի ինքն դի-
7 տէր, թէ ինչ պիտի անէր։ Փիլիպ-
պոսը պատասխանեց նորան, Երկու
հարիւր դահեկանի հաց բաւական չէ
դորանց, որ դորանից ամեն մէկը մի
8 քիչ առնէ։ Նորա աշակերտներից
մէկն, Անդրէասը՝ վէմ Սիմոնի եղ-
9 բայրն՝ ասաց նորան, Այս տեղ մէկ
տղայ կայ, որ հինգ գարէ հաց ունի
և երկու փոքր ձուկ, բայց սա ի՞նչ
10 է այնչափ մարդկանց համար։ Յիսուսն
էլ ասաց, Մարդկանցը նստեցրէք։ և
շատ խոտ կար այն տեղը, և մարդիկը
նստեցան համարով իբր հինգ հազար։
11 Եւ Յիսուսը հացերն առաւ՝ գոհա-
յաւ և բաժանեց աշակերտներին, և
աշակերտներն էլ նստողներին, նոյն-
պէս էլ ձկներից որչափ որ կամե-
12 ցան։ Եւ երբոր կշտացան, ասաց իր
աշակերտներին, Ժողովեցէք աւելցած
13 կտորները՝ որ բան չկորչի։ Եւ ժո-
ղովեցին, և կտորներից տասներկու
կողով լցրին այն հինգ գարէ հա-
ցից, որ ուտողներից աւելացաւ։

14 Բայց մարդիկն՝ երբոր տեսան այս
նշանն որ արաւ Յիսուսը, ասում էին՝
թէ Սա է ճշմարտապէս այն մարգա-
15 րէն որ պիտի աշխարհ գար։ Յիսուսն
էլ իմանալով թէ գալու են իրան
յափշտակելու, որ թագաւոր շինեն
իրան, դարձեալ գնաց լեառը մէ-
16 նակ։ Եւ երբոր իրիկուն եղաւ, նորա
17 աշակերտները իջան ծովի եզրը. Եւ
նաւը մտնելով գնացին ծովի այն
կողմը՝ Կափառնայում. և արդէն
մթնցել էր, և Յիսուսը չէր եկել նո-
18 րանց մօտ։ Եւ ծովն էլ սաստիկ քա-
19 մու փչելուցը յուզվում էր։ Եւ եր-
բոր քսան և հինգ կամ երեսուն ա-
պարէզի չափ առաջ գնացել էին, տե-
սան Յիսուսին ծովի վերայ գալիս, որ
նաւին մօտենում էր և վախեցան։
20 Նա էլ ասաց նորանց. Ես եմ մի վա-
21 խենաք։ Եւ կամենում էին նորան ըն-
դունել նաւի մէջ. և նաւը շուտով
հասաւ այն երկիրն, որ գնում էին։
22 Հետեւեալ օրն այն ժողովուրդը,
որ ծովի այն կողմն էր, տեսնելով որ
ուրիշ նաւ չկար այն տեղ մէկիցը ջոկ՝

որ նորա աշակերտները նորա մէջ մը-
տան. և որ Յիսուսը իր աշակերտնե-
րի հետ նաւը չէր մտած, բայց միայն
23 նորա աշակերտները գնացին։ Բայց
Տիբերեայիցը ուրիշ նաւեր եկան այն-
տեղի մօտ, ուր հացը կերան Տիրոջ
24 գոհանալովը։ Արդ երբոր ժողովուրդը
տեսաւ, որ Յիսուսն այնտեղ չէ, և
ոչ էլ նորա աշակերտները, իրանք էլ
նաւերը մտան և եկան Կափառնա-
25 յում, Յիսուսին որոնելով։ Եւ երբոր
նորան ծովի այն կողմին գտան, նո-
րան ասացին. Ռաբբի, ե՞րբ եկար այս
26 տեղ։ Յիսուսը պատասխանեց նորանց
և ասաց. Ճշմարիտն ճշմարիտն ա-
սում եմ ձեզ. Դուք ինձ որոնում էք՝
ոչ թէ նորա համար որ նշաններ տե-
սաք, բայց որ հացիցը կերաք և կշ-
27 տացաք։ Գործեցէք ոչ թէ կորչելու
կերակուրը, այլ այն կերակուրն, որ
մնացող է յաւիտենական կեանքի մէջ,
որ Որդին մարդոյ կ՚տայ ձեզ. վասն
զի Աստուած Հայրը կնքեց նորան։
28 Արդ նորան ասացին. Ի՞նչ անենք, որ
29 Աստուծոյ գործքերը գործենք։ Յի-

ուսան էլ պատասխանեց և Նորանց ա-
սաց. Սա է Աստուծոյ գործը, որ հա-
ւատաք Նորան, որին նա ուղարկեց։
30 Եւ Նորան ասացին. Ապա դու ի՞նչ
նշան ես անում, որ տեսնենք և հա-
31 ւատանք, ի՞նչ ես գործում։ Մեր հար-
քըն անապատումը մանանայ կերան.
ինչպէս գրուած է ՝՝ Երկնքիցը հաց
32 տուաւ Նորանց ուտելու։ Յիսուսն էլ
Նորանց ասաց. Ճշմարիտն ճշմարիտն
ասում եմ ձեզ. Ոչ թէ Մովսէսը տը-
ւաւ ձեզ այն հացը երկնքից, այլ իմ
Հայրը տալիս է ձեզ երկնքից ճշմա-
33 րիտ հացը։ Վասն զի Աստուծոյ հացը
նա է՝ որ երկնքիցն է իջնում, և որ
34 աշխարհքին կեանք է տալիս։ Նորանք
էլ ասացին. Տէր, ամեն ժամանակ
35 տուր մեզ այդ հացը։ Յիսուսն էլ
Նորանց ասաց. Ես եմ կենաց հացը.
ինձ մօտ եկողը չի սովիլ, և ինձ հա-
36 ւատացողը երբէք չի ծարաւիլ։ Բայց
ասացի ձեզ, թէ տեսաք էլ ինձ, և
37 չէք հաւատում։ Այն ամենը որ Հայրն
ինձ է տալիս, ինձ մօտ կ'գայ. և ինձ
38 մօտ եկողին դուրս չեմ հանիլ։ Քանզի

ես իջայ երկնքիցն, որ ոչ թէ իմ
կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի
39 կամքը։ Սա է ինձ ուղարկող Հօր կամ-
քը, որ այն ամենն որ նա ինձ տուաւ.
Նորանից չ'կորցնեմ. այլ յետին օ-
40 րումը յարուցանեմ Նորան։ Եւ սա է
ինձ ուղարկողի կամքն. որ ամեն ով
որ տեսնէ Որդին և հաւատայ Նո-
րան, յաւիտենական կեանք ունե-
նայ. և ես յետին օրումը կ'յարու-
ցանեմ Նորան։
41 Հրէաներն էլ տրտնջում էին Նո-
րանից, որ ասաց, ՝՝ Ես եմ երկն-
42 քից իջած հացը։ Եւ ասում էին.
Չէ՞ որ սա Յիսուսն է Յոսէփի որդին,
որի հայրը և մայրը ճանաչում ենք.
ապա սա ի՞նչպէս է ասում, Ես եր-
43 կնքիցն եմ իջել։ Յիսուսն էլ պա-
տասխանեց և ասաց Նորանց. Մի
44 տրտնջաք իրար հետ։ Ոչ ով կարող
չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ
ուղարկեց՝ չ'քաշէ Նորան. և ես յե-
տին օրումը կ'յարուցանեմ Նորան։
45 Գրուած է մարգարէների մէջ ՝՝ Եւ
ամենքն Աստուածանից սովորած կ'լի-

նին։ արդ ամեն ով որ Հօրիցը լսում
և սովորում է, դալիս է ինձ մօտ։
46 Իբր չէ թէ մէկը տեսել է Հօրն։ բայց
միայն նա, որ Աստուածանից է։ նա
47 տեսել է Հօրը։ Ճշմարիտն ճշմարիտն
ասում եմ ձեզ։ Ինձ հաւատացողը
48 յաւիտենական կեանք ունի։ Ես եմ
49 կենաց հացը։ Ձեր հարքը մանանան
50 կերան անապատումը, և մեռան։ Սա
է այն հացն, որ երկնքիցն է իջնում
որ եթէ մէկը սորանից ուտէ, չի մեռ-
51 նիլ։ Ես եմ կենդանի հացն, որ եր-
52 կնքիցն է իջել։ Եթէ մէկն այս հա-
ցից ուտէ, յաւիտեան կ'ապրի։ և
այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ մարմինն
է, որ ես նորան աշխարհքի կենաց
համար կ'տամ։
53 Հրէաներն էլ իրար հետ կռվում
էին և ասում։ Սա ի՞նչպէս կարող է
54 իր մարմինը տալ մեզ ուտելու։ Ցի-
սուսն էլ նորանց ասաց։ Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ։ Եթէ Որ-
դոյ մարդոյ մարմինը չուտէք և նորա
արիւնը չխմէք, կեանք չունիք ձեր
55 անձերումը։ Իմ մարմինը ուտողը և

իմ արիւնը խմողը յաւիտենական
կեանք ունի։ և ես յետին օրումը կը
56 յարուցանեմ նորան։ Վասն զի իմ
մարմինը ճշմարտապէս կերակուր է,
և իմ արիւնը ճշմարտապէս խմելիք
57 է։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւ-
նը խմողը մնում է ինձանում, և ես
58 նորանում։ Ինչպէս ինձ ուղարկեց
կենդանի Հայրը, և ես կենդանի եմ
Հօր համար։ այնպէս էլ նա որ ինձ
ուտում է, կենդանի կ'լինի ինձ հա-
59 մար։ Սա է այն հացն՝ որ երկնքիցն
է իջել։ ոչ թէ ինչպէս ձեր հարքը
մանանան կերան և մեռան։ այս հացն
ուտողը յաւիտեան կ'ապրի։
60 Այս ասաց ժողովարանումը երբ որ
Կափառնայումի մէջ սովորեցնում էր։
61 Եւ նորա աշակերտներից շատերը
որ լսեցին, ասացին։ Խիստ է այդ
բանը, ո՞վ կարող է լսել դորան։
62 Բայց երբոր Ցիսուսը դիտաց իւր անձ-
նումը, թէ իր աշակերտները տրտնջ-
ում էին դորա համար, նորանց ա-
սաց։ Դա՞ է դայթակղեցնում ձեզ։
63 Ապա եթէ Որդին մարդոյ տեսնէք՝

64 վեր գնալիս, ուր առաջ էր։ Հոգին
է կենդանացնողը, մարմինը ոչինչ օ-
գուտ չէ տալիս. այն բանն որ ես
ձեզ հետ խօսեցի, հոգի է և կեանք
65 է։ Բայց ձեզանից կան ոմանք, որ չեն
հաւատում, վասնզի Յիսուսը սկզբից
գիտէր, ո՞վ են չհաւատացողները, և
ով է նա՝ որ պիտի մատնէր իրան։
66 Եւ ասաց. Նորա համար ասացի ձեզ՝
թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ,
եթէ իմ Հօրից տրուած չլինի նո-
րան։
67 Սորանից յետոյ նորա աշակերտ-
ներից շատերը յետ գնացին, և այլևս
68 ման չէին գալիս նորա հետ։ Յիսուսն
էլ ասաց այն տասներկուսին, Մի՞թէ
69 դուք էլ ուզում էք գնալ։ Սիմոն
Պետրոսն էլ պատասխանեց նորան.
Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենա-
70 կան կենաց խօսքեր ունիս դու։ Եւ
մենք հաւատացինք և ճանաչեցինք,
թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աս-
71 տուծոյ որդին։ Յիսուսը պատասխա-
նեց նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասն-
երկուսիդ ընտրեցի, և ձեզանից մէկը

72 սատանայ է։ Եւ սա Իսկարիոտացի
Սիմոնեան Յուդային էր ասում. քան-
զի նա էր մատնելու նորան. և ինքը
տասներկուսից մէկն էր։

Գլ. Է

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը ման էր
գալիս Գալիլեայի մէջ, վասն զի չէր
կամենում Հրէաստանումը ման գալ,
որովհետեւ Հրէաները որոնում էին
սպանել նորան։
2 Եւ Հրէաների տաղաւարահարաց տօ-
3 նը մօտիկ էր։ Եւ նորա եղբայրներն
ասացին նորան. Ա՛յս տեղից դուրս եկ
և գնա Հրէաստան, որ քո աշակերտ-
ներն էլ տեսնեն քո գործերը, որ
4 գործում ես. վասն զի ոչ ով չկայ՝ որ
թաղուն մի բան անէ, և ուզէ ճա-
նաչուած լինել, եթէ դու այդ բա-
ները գործում ես, քո անձը յայտ-
5 նիր աշխարհին։ Որովհետեւ իր եղ-
բայրներն էլ չէին հաւատում նորան.
6 Յիսուսն էլ ասաց նորանց. Իմ ժա-
մանակը դեռ հասած չէ, բայց ձեր
7 ժամանակը միշտ պատրաստ է։ Աշ-

խարհ.քը կարող չէ ձեզ տալ. բայց
ինձ տալում է, վասն զի ես նորա
համար վկայում եմ, թէ նորա գործ-
8 քերը չար են։ Դուք գնացէք այն
տօնը, ես դեռ չեմ գնում այն տօ-
նը, որովհետեւ իմ ժամանակը դեռ
9 լրացած չէ։ Սա որ նորանց ասաց,
10 մնաց Գալիլեայում։ Երբոր նորա եղ-
բայրները գնացին, այն ժամանակ
ինքն էլ գնաց այն տօնը, ոչ թէ
յայտնի, այլ իբր գաղտնաբար։
11 Եւ Հրէաները որոնում էին նորան
այն տօնումը և ասում. Ո՞ր տեղ է
12 նա։ Եւ ժողովրդոց մէջ շատ ղրոյցք
կար նորա համար. ոմանք ասում էին.
թէ Բարի մարդ է. ուրիշներն էլ ա-
սում էին. Ոչ, այլ ժողովրդին մոլո-
րեցնում է։
13 Սակայն ոչ ով համարձակ չէր խո-
սում նորա վերայ՝ Հրէից վախի հա-
մար։
14 Երբոր տօնն արդէն կէս եղաւ, Յի-
սուսը վեր ելաւ տաճարը և սովորե-
15 ցնում էր։ Եւ Հրէաները զարմա-
նում էին և ասում. Սա ի՞նչպէս է

գիտում գիրքերը, առանց սովորած
16 լինելու։ Յիսուսը պատասխանեց նո-
րանց և ասաց. Իմ վարդապետու-
թիւնն իմն չէ, այլ ինձ ուղարկողինն
17 է։ Եթէ մէկը կամենում է նորա
կամքն անել, նա կ'իմանայ այս վար-
դապետութեան համար, թէ արդեօք
Աստուածանի՞ց է, կամ եթէ ես իմ
18 անձիցն եմ խօսում։ Իր անձիցը խօ-
սողը, իր անձի փառքն է որոնում.
բայց նա որ իրան ուղարկողի փառքն
է որոնում, նա ճշմարիտ է և անի-
19 րաւութիւն չկայ նորանում։ Չէ՞ որ
Մովսէս տուաւ ձեզ օրէնքը, և ձե-
զանից ոչ ով չէ կատարում օրէնքը։
20 Ինչո՞ւ էք ուզում ինձ սպանել։ Ժողո-
վուրդը պատասխանեց և ասաց. Դեւ
ունիս. ո՞վ է ուզում քեզ սպանել։
21 Յիսուսը պատասխանեց և ասաց նո-
րանց. Մէկ գործ գործեցի, և ա-
22 մենքդ զարմացել էք։ Նորա համար
Մովսէս ձեզ տուաւ թլփատութիւնը,
(ոչ թէ Մովսէսից է, այլ հայրերից.)
և շաբաթ օրը մարդ էք թլփատում։
23 Եթէ մարդ շաբաթ օրուն թլփա-

տութիւն է ընդունում, որ Մովսէսի
օրէնքը չքանդուի, ինձ բարկանո՞ւմ
էք, որ ես ամբողջ մարդ բժշկեցի
24 շաբաթ օրը։ Այլի երեւոյթով մի
դատէք, այլ ուղիղ դատաստան ա-
րէք։
25 Արդ Երուսաղէմացիներից ոմանք
ասում էին. Չէ՞ որ սա նա է, որին
26 ուզում են սպանել։ Եւ ահա հա-
մարձակ խօսում է, և ոչինչ չեն ա-
սում դորան. մի դուցէ իրաւ իշխան-
ներն էլ իմացան, որ սա է ճշմար-
27 տապէս Քրիստոսը։ Բայց սորան դի-
տենք, ՌՏ որ տեղից է. իսկ Քրիս-
տոսն երբոր գայ, ոչ ոք չի դիտենալ
թէ որ տեղից է։
28 Յիսուսն էլ՝ մինչ սովորեցնում էր,
այն տաճարումն աղաղակեց տաճարումն ա-
սելով՝ ինձ էլ էք դիտում և դի-
տում էլ էք թէ ինչ տեղից եմ. և ես
իմ անձիցը չեմ եկել. այլ ճշմարիտ
է ինձ ուղարկողը. որին դուք չէք
29 դիտում։ Իսկ ես դիտեմ նորան, վասն
դի նորանից եմ, և նա ուղարկեց ինձ։
30 Եւ ուզում էին բռնել նորան. բայց

ոչ ով ձեռք չդցեց նորա վերայ.
քանզի նորա ժամը դեռ չէր հասել։
31 Եւ ժողովրդից շատերը հաւատացին
նորան և ասում էին. Թէ Քրիստոս
երբոր գայ, արդեօ՞ք դորանցից ա-
ւելի նշաններ կ'անէ, քան որ սա ա-
րաւ։
32 Եւ փարիսեցիները լսեցին ժողովրը-
դից, որ այդ բաները տրանջում էին
նորա համար. և փարիսեցիներն և
քահանայապետներն սպասաւորներ
33 ուղարկեցին, որ բռնեն նորան։ Յի-
սուսն էլ ասաց նորանց. Դեռ մի քիչ
ժամանակ ձեզ հետ եմ, և գնում եմ
34 ինձ ուղարկողի մօտ։ Ինձ կ'որոնէք
և չէք գտնիլ, և որ տեղ որ ես եմ,
35 դուք չէք կարող գալ։ Հրէաներն էլ
իրար ասացին. Դա ո՞ր տեղ է գնա-
լու, որ մենք չգտնենք դորան. արդ-
ե՞օք Հելլենացոց ցրուած ժողովուրդ-
ների մօտն է գնալու և Հելլենացի-
36 ներին է սովորեցնելու։ Ի՞նչ է այն
խօսքն, որ ասաց. ՌՏ ինձ կ'որոնէք
և չէք գտնիլ, և որ տեղ որ ես եմ,
դուք չէք կարող գալ։

37 Եւ ասնի վերջին մեծ օրումը Յի-
սուսը կանգնած էր աղաղակեց և ա-
սաց. Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ
38 մօտ գայ, և խմէ։ Ինձ հաւատացո-
ղը, ինչպէս գիրքն ասում է, Նորա
փորէցը կենդանի ջրերի գետեր կը-
39 բղխին։ Սա ասաց Հոգոյն համար, որ
ընդունելու էին Նորան հաւատացողնե-
ները, քանզի դեռ Հոգին Սուրբ տըր-
ուած չէր, որովհետեւ Յիսուսը դեռ
40 չէր փառաւորուած։ Արդ ժողովրդից
շատերը, երբոր այս խօսքը լսեցին,
ասում էին. Սա ճշմարտապէս այն
41 մարգարէն է։ Ուրիշներն ասում էին.
Սա Քրիստոսն է. և էլ ուրիշներն ա-
սում էին. Մի՞թէ Քրիստոսը Գալիլ-
42 եայից կ'գայ։ Չէ՞ որ գիրքն ասում
է. Քրիստոս Դաւթի սերունդից և
Բեթղեհեմ գիւղից կ'գայ, որ տեղ
43 Դաւիթն էր։ Եւ տարաձայնութիւն
եղաւ ժողովրդի մէջ Նորա համար։
44 Եւ Նորանցից ոմանք կամեցան բռնել
Նորան. բայց ոչ ոք ձեռք չդցեց նո-
րա վերայ։
45 Եւ սպասաւորները եկան քահա-

նայապետների և փարիսեցիների մօտ.
և սորանք ասացին նորանց. Ինչո՞ւ
46 համար Նորան չբերիք։ Սպասաւորնե-
րը պատասխանեցին. Երբէք մի մարդ
այսպէս չխօսեց ինչպէս այս մարդը։
47 Փարիսեցիքն էլ պատասխանեցին և ա-
սացին. Մի՞թէ դուք էլ մոլորուեցաք։
48 Մի՞թէ իշխաններից կամ փարիսե-
49 ցիներից մէկը հաւատա՞ց Նորան։ Այլ
այդ ռամիկ ժողովուրդը, որ օրէնքը
50 չէ գիտում, անիծուած են։ Նիկոդի-
մոսը, որ գիշերը Նորա մօտ էր եկել,
նորանցից մէկը լինելով, ասաց նո-
51 րանց. Մի՞թէ մեր օրէնքը մի մարդի
դատում է, եթէ առաջ չլսէ Նորա-
նից և չգիտենայ, թէ ինչ է գործում։
52 Պատասխանեցին և ասացին Նորան.
Մի՞թէ դու էլ Գալիլեայից ես. քըն-
նիր և տես, որ Գալիլեայից մար-
53 գարէ դուրս չէ եկել։ Եւ ամեն մէ-
կը գնաց իր տունը։

ԳԼ. Ը.

1 Եւ Յիսուսը գնաց Ձիթենեաց լեռ-
2 ը։ Եւ առաւօտանց դարձեալ եկաւ

տաճարը, և բոլոր ժողովուրդը նորա
մօտ էր դալիս. և նստած սովորեց-
3 նում էր նորանց։ Դպիրները և փա-
րիսեցիները մի կին բերին նորա մօտ՝
շնութեան մէջ բռնուած, և նորան
4 մէջտեղը կանգնեցնելով. Նորան ա-
սացին. Վարդապետ, այս կինը բռ-
5 նուել է յայտնապէս շնանալիս։ Եւ օ-
րէնքումը Մովսէս պատուիրեց մեզ, որ
այսպիսիները քարկոծուին. հիմա դու
6 ի՞նչ ես ասում։ Բայց այս բանն ա-
սում էին նորան փորձելով, որ չարա-
խօսեն նորանից։ Բայց Յիսուսը դէ-
պի ցած ծռելով՝ գրում էր հողի վե-
7 րայ։ Բայց երբոր տիպում էին հարց-
նելով նորան, վեր նայեց՝ և ասաց.
Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ
8 նա քար դցէ դորա վերայ։ Եւ դարձ-
եալ դէպի ցած ծռելով՝ գրում էր
9 հողի վերայ։ Նորանք էլ երբոր սա լսե-
ցին և իրանց խղճմտանքիցը յանդի-
մանուեցան՝ մէկը մէկի ետեւից դուրս
էին գնում. ծերերից սկսած մինչեւ
յետինները. և Յիսուսը միայն մնաց,
10 և կինը կանգնած մէջ տեղը։ Յիսուսն

էլ վեր նայեց, ոչ ոքի չտեսաւ այն
կնկանից զատ, և ասաց նորան. Ով
կին, ո՞ւր են այն քո դանդատաւոր-
ները. ոչ ով քեզ չդատապարտե՞ց։
11 Նա էլ ասաց. Ոչ, ով տէր. և Յիսուսն
էլ ասաց նորան. Ես էլ չեմ քեզ դա-
տապարտում. գնա, և այսուհետեւ
մեղք մի գործեր։
12 Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նո-
րանց հետ և ասաց. Ես եմ աշխարհ-
քի լոյսը. ով որ իմ ետեւից դայ, նա
խաւարումը չի գնալ, այլ կենաց լոյ-
13 սը կ'ընդունի։ Փարիսեցիներն էլ ա-
սացին նորան. Դու քո անձի համար
ես վկայում. քո վկայութիւնը ճշմա-
14 րիտ չէ։ Յիսուսը պատասխանեց և
ասաց նորանց. Թէ և ես վկայեմ իմ
անձի համար, իմ վկայութիւնը ճըշ-
մարիտ է. վասն զի գիտեմ թէ որ
տեղից եկայ և որ տեղ եմ գնում.
բայց դուք չէք գիտում, թէ որ տե-
ղից եմ գալիս, և որ տեղ եմ գնում։
15 Դուք ըստ մարմնոյ էք դատում. ես
16 չեմ դատում ոչ մէկին էլ։ Եւ եթէ
ես դատեմ էլ, իմ դատաստանը ճըշ-

մարիա է. վասն զի ես միայն չեմ,
17 այլ ես և ինձ ուղարկող Հայրը։ Եւ
ձեր օրէնքումն էլ գրուած է. թէ երկու մարդկանց վկայութիւնը ճշմա-
18 րիտ է։ Ես եմ, որ ինձ համար վկա-
յում եմ, և վկայում է ինձ համար
19 ինձ ուղարկող Հայրը։ Եւ ասում էին
նորան. Ո՞ւր է քո Հայրը. Յիսուսը
պատասխանեց. Ոչ ինձ էք գիտում,
և ոչ իմ Հօրը. եթէ ինձ գիտենայիք,
իմ Հօրն էլ կ'գիտենայիք։
20 Այս բանը Յիսուսը գանձատան մէջ
խօսեց նորանց հետ տաճարումը սո-
վորեցնելիս. և ոչ ով չբռնեց նորան.
վասն զի դեռ նորա ժամը չէր հասել։
21 Յիսուսը դարձեալ ասաց նորանց.
Ես գնում եմ, և ինձ կ'որոնէք. և
ձեր մեղաց մէջ կ'մեռնիք. որ տեղ
որ ես եմ գնում, դուք չէք կարող
22 գալ։ Հրէաներն էլ ասում էին. Մի՞-
թէ ինքն իրան կ'սպանէ, որ ասում
է. թէ Որ տեղ որ ես եմ գնում,
23 դուք չէք կարող գալ։ Եւ ասաց նո-
րանց. Դուք ներքեւիցն էք, ես վե-
րեւիցն եմ. դուք այս աշխարհքիցն

24 էք, ես այս աշխարհքիցը չեմ։ Արդ
ասացի ձեզ. թէ Ձեր մեղաց մէջ կը-
մեռնիք. քանզի եթէ չհաւատաք թէ
ես եմ, ձեր մեղաց մէջ կ'մեռնիք։
25 Եւ ասացին նորան. Դու ո՞վ ես. և
Յիսուսը ասաց նորանց. Առաջ այն,
26 որ խօսում էլ եմ ձեզ հետ։ Շատ բան
ունիմ ձեզ համար խօսելու և դատե-
լու. բայց ինձ ուղարկողը ճշմարիտ
է. և ես ինչ որ նորանից լսեցի, այն
27 եմ խօսում աշխարհքի մէջ։ Ջիմա-
ցան, թէ Հօր համար էր ասում նո-
րանց։
28 Յիսուսն էլ ասաց նորանց. Երբոր
Որդոյն մարդոյ կ'բարձրացնէք, այն
ժամանակ կ'իմանաք, թէ ես եմ. և
իմ անձիցն ոչինչ չեմ անում. այլ
ինչպէս իմ Հայրը սովորեցրեց ինձ,
29 այն եմ խօսում։ Եւ ինձ ուղարկողն
ինձ հետ է. ինձ մէնակ չէ թողել
Հայրը, վասն զի ես միշտ նորան հա-
ճելի բաներն եմ անում։
30 Երբոր նա այս բաները խօսում էր,
31 շատերը հաւատացին նորան։ Եւ Յի-
սուսը իրան հաւատացած Հրէաներին

ասայ. Եթէ դուք իմ խօսքի մէջ
կենաք, ճշմարտապէս իմ աշակերտ-
32 ներն էք։ Եւ ճշմարտութիւնը կ'ճա-
նաչէք. և ճշմարտութիւնը կ'ազատէ
33 ձեզ։ Պատասխանեցին նորան. Մենք
Աբրահամի զաւակ ենք, և ոչ ոքի եր-
բէք չենք ծառայել. դու ի՞նչպէս ես
34 ասում, թէ ազատ կ'լինիք։ Յիսուսը
պատասխանեց նորանց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ Ամեն
ով որ մեղք է գործում, մեղքի ծա-
35 ռայ է։ Ծառան էլ յաւիտեան չի կե-
նում տան մէջ. որդին կենում է յա-
36 ւիտեան։ Ուրեմն եթէ Որդին ազա-
37 տէ ձեզ, յիրաւի ազատ կ'լինիք։ Գի-
տեմ որ Աբրահամի զաւակ էք. բայց
ուզում էք ինձ սպանել. վասն զի իմ
38 խօսքը տեղ չունի ձեզանում։ Ես ինչ
որ տեսայ իմ Հօր մօտ, խօսում եմ.
և դուք՝ ինչ որ ձեր հօրից տեսաք,
39 անում էք։ Պատասխանեցին և ասա-
ցին նորան. Մեր հայրն Աբրահամն
է. Յիսուսը նորանց ասայ. Եթէ Աբ-
րահամի որդիք լինէիք, Աբրահամի
40 գործքերը կը գործէիք։ Բայց հիմա

ուզում էք ինձ սպանել, մի մարդի,
որ ճշմարտութիւնն եմ խօսել ձեզ.
որ Աստուածանից լսեցի. այդ բանն
41 Աբրահամ չարաւ։ Դուք ձեր հօր գործ-
քերն էք անում. և ասացին նորան.
Մենք պոռնկութիւնից չենք ծնուած.
մէկ Հայր ունինք, այսինքն Աստուած։
42 Յիսուսն էլ նորանց ասայ. Եթէ ձեր
Հայրն Աստուած լինէր, ինձ կ'սիրէ-
իք. վասն զի Աստուածանից դուրս ե-
լայ և եկայ. որովհետեւ ոչ թէ իմ
անձինն եկայ, այլ նա ուղարկեց ինձ։
43 Ինչո՞ւ համար իմ խօսքը չէք իմա-
նում. նորա համար որ դուք չէք կա-
44 րող իմ խօսքը լսել։ Դուք սատանայ
հօրից էք, և կամենում էք ձեր հօր
ցանկութիւններն անել. նա սկզբից
մարդասպան էր, և ճշմարտութեան
մէջ չկեցաւ, որովհետեւ ճշմարտութիւն
չկայ նորանում. երբոր սուտն է խօ-
սում, իրաններից է խօսում, քանզի
ստախօս է և նորա (ստութեան) հայ-
45 ը։ Բայց ես, որովհետեւ ճշմարտու-
թիւն եմ խօսում, ինձ չէք հաւա-
46 տում։ Ձեզանից ո՞վ կարող է ինձ

մեղայ համար յանդիմանել. բայց ե-
թէ ճշմարտութիւնն եմ ասում, ինչ-
47 ո՞ւ չէք հաւատում ինձ։ Աստուածա-
նից լինողը Աստուծոյ խօսքերը լսում
է. նորա համար դուք չէք ականջ
48 դնում, որ Աստուածանից չէք։ Հրէ-
անները պատասխանեցին և ասացին
նորան. Չէ՞ որ մենք լաւ ենք ասում,
թէ դու Սամարացի ես, և դեւ ու-
49 նիս։ Յիսուսը պատասխանեց. Ես դեւ
չունիմ, այլ իմ Հօրը պատուում եմ,
50 և դուք անպատուում էք ինձ։ Եւ
ես իմ փառքը չեմ որոնում. կայ ո-
51 րոնողը և դատողը։ Ճշմարիտն ճշմա-
րիտն ասում եմ ձեզ. Եթէ մէկն իմ
խօսքը պահէ, նա մահ չի տեսնիլ յա-
52 ւիտեան։ Հրէաներն էլ ասացին նո-
րան. Հիմա իմացանք, որ դեւ ու-
նիս. Աբրահամը մեռաւ և մարգարէ-
ներն էլ. և դու ասում ես. Եթէ մէ-
կըն իմ խօսքս պահէ, մահ չի ճա-
53 շակիլ յաւիտեան։ Մի՞թէ դու աւե-
լի մեծ ես քան մեր հայր Աբրահա-
մը, որ մեռաւ և մարգարէներն էլ
54 մեռան. դու քեզ ո՞վ ես անում։ Յի-

սուսը պատասխանեց. Եթէ ես իմ
անձը փառաւորեմ, իմ փառքը ոչինչ
է. Հայրն է ինձ փառաւորողը, որի
համար դուք ասում էք. թէ Ձեր
55 Աստուածն է. Եւ չէք ճանաչում նո-
րան. բայց ես գիտում եմ նորան. և
եթէ ասեմ. թէ Չեմ գիտում նորան,
ձեզ նման կ'լինիմ ստախօս. բայց գի-
տում եմ նորան, և նորա խօսքը պա-
56 հում եմ։ Աբրահամ՝ ձեր հայրը ցնծա-
ցաւ որ իմ օրը տեսնէ, և տեսաւ, և
57 ուրախացաւ էլ։ Հրէաները նորան ա-
սացին. Դու դեռ չի՞սուն տարեկան
58 չես, և Աբրահամի՞ն տեսար։ Յի-
սուսը նորանց ասաց. Ճշմարիտն ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ. Աբրահամի
59 լինելուցն առաջ եմ ես։ Եւ քարեր
վերցրին առան, որ նորա վերայ դցեն.
բայց Յիսուսը ծածկուեցաւ, և դուրս
ելաւ դնաց տաճարից՝ նորանց միջովն
անցնելով, և այսպէս դնաց հեռացաւ։

ԳԼ. Թ

1 Եւ անցկենալիս մի մարդ տեսաւ կոյր
2 'ի ծնէ։ Եւ նորա աշակերտները հարց-

րին Նորան և ասացին. Ռաբբի, ո՞վ
է մեղանչել, սա՞ թէ իր ծնո՞ղքը, որ
3 կոյր ծնուեցաւ։ Յիսուսը պատասխա-
նեց. Ոչ դա է մեղանչել, և ոչ էլ իր
ծնողքը. այլ որ Աստուծոյ գործքերը
4 յայտնի լինին գործանում։ Ինձ պէտք
է Նորա գործքերը գործել, որ ինձ
ուղարկեց, մինչեւ որ օր կայ. գիշե-
րը գալիս է, որ այն ժամանակ ոչ
5 ով կարող չէ գործել։ Քանի որ աշ-
խարհքումն եմ, լոյս եմ աշխարհքի.
6 Այս ասելով թքեց գետինը, և թք-
քիցը ցեխ շինեց, և ցեխը քսեց կոյ-
7 րի աչքերի վերայ, եւ Նորան ասաց.
Գնա՝ լուացուիր Սելոամայ աւազա-
նումը, որ թարգմանվում է՝ ուղար-
կուած. և գնաց լուացուեցաւ, եկաւ
8 և տեսնում էր։ Բայց դրացիները
և Նորանք որ առաջուց տեսել էին
Նորան, որ կոյր էր, ասում էին՝ Չէ՞
9 որ սա է այն նստող մուրացողը. Ու-
րիշներն ասում էին, թէ Նա է. ու-
րիշներն էլ, թէ Նորան նման է. բայց
10 ինքն ասում էր թէ Ես եմ։ Եւ Նո-
րան ասում էին. Ապա աչքերդ ի՞նչ-

11 պէս բացուեցան։ Նա պատասխանեց
և ասաց. Մի մարդ՝ անունը Յիսուս,
ցեխ շինեց և աչքերիս քսեց, և ինձ
ասաց. Գնա Սելոամ աւազանը, և լու-
ացուիր. գնացի և լուացուեցայ, և
12 տեսնում եմ։ Եւ Նորան ասացին. Ո՞ւր
է նա. ասաց. Չեմ գիտում։
13 Փարիսեցիների մօտ տարան Նորան,
14 որ մի ժամանակ կոյր էր։ Եւ շաբաթ
օր էր, երբոր Յիսուսը ցեխը շինեց
15 և Նորա աչքերը բացաւ։ Փարիսեցի-
ները դարձեալ հարցնում էին Նո-
րան, թէ ի՞նչպէս տեսաւ. և նա Նո-
րանց ասաց. Ցեխ դրաւ իմ աչքերի
վերայ, և լուացուեցայ, և տեսնում
16 եմ։ Եւ Փարիսեցիներից ոմանք ասա-
ցին. Այն մարդն Աստուածանից չէ,
վասն զի շաբաթը չէ պահում. ուրիշ-
ներն ասում էին, ի՞նչպէս կարող է մի
մեղաւոր մարդ այսպիսի նշաններ ա-
նել. և բաժանմունք կար Նորանց մէջ։
17 Դարձեալ ասացին կոյրին. Դու ի՞նչ
ես ասում Նորա համար, որ աչքերդ
բացաւ. և նա ասաց, թէ Մարգարէ
18 է։ Եւ Հրէաները չէին հաւատում

նորա համար, թէ կոյր էր և բացուեցաւ. մինչեւ որ աչքը բացուածի
19 ծնողքը կանչեցին. Նորանց հարցրին և ասացին. Սա՞ է ձեր որդին, որի համար ասում էք դուք, թէ կոյր ծնուեցաւ. ապա ի՞նչպէս է տեսնում
20 հիմա։ Նորա ծնողքն պատասխանեցին և ասացին. Գիտում ենք, որ սա է մեր որդին, և թէ կոյր ծնուեցաւ.
21 Բայց թէ հիմա ի՞նչպէս է տեսնում, չգիտենք կամ ո՞վ բացաւ նորա աչքերը մենք չգիտենք. ինքն չափահաս է. իրան հարցրէք, թող ինքն խօսի
22 իրան համար։ Նորա ծնողքն այս ասացին. վասն զի Հրէաներից վախենում էին. քանզի Հրէաները արդէն միասին որոշել էին, որ եթէ մէկը Քրիստոս դաւանէ նորան, ժողովարանից դուրս
23 լինի։ Նորա համար նորա ծնողքը ասացին, թէ Ինքն չափահաս է, իրա-
24 նից հարցրէք։ Յետոյ երկրորդ անգամ կանչեցին այն մարդուն, որ կոյր էր, և նորան ասացին. Աստուծոյ փառք տուր, մենք գիտենք, որ այն
25 մարդը մեղաւոր է։ Նա էլ պատաս-

խանեց և ասաց. Թէ մեղաւոր է, ես չգիտեմ. մէկ բան եմ գիտում, որ
26 կոյր էի և հիմա տեսնում եմ։ Եւ դարձեալ ասացին նորան. Ի՞նչ արաւ
27 քեզ. ի՞նչպէս բացաւ աչքերդ։ Նորանց պատասխանեց. Արդէն ձեզ ասացի և չլսեցիք. ի՞նչու էք դարձեալ կամենում լսել. մի՞թէ դուք էլ էք կամենում նորան աշակերտ լի-
28 նել։ Նորանք հայհոյեցին նորան և ասացին. Դու ես նորա աշակերտ. իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք։
29 Մենք գիտենք, որ Աստուած Մովսէսի հետ խօսեց. բայց սորան չենք գի-
30 տում, թէ ո՞ր տեղից է։ Մարդը պատասխանեց և նորանց ասաց. Հէնց դա է զարմանալին որ դուք չէք գիտում, թէ ո՞ր տեղից է, և նա իմ
31 աչքերը բացաւ։ Եւ գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում, այլ եթէ մէկը աստուածապաշտ է՝ և նորա կամքը կատարում է, նորան լը-
32 սում է։ Յաւիտենից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչքերը բա-
33 ցաւ։ Եթէ սա Աստուածանից չէր,

34 ոչինչ չէր կարող անել։ Պատասխա-
նեցին և նորան ասացին. Դու բոլո-
րովին մեղքի մէջ ես ծնուել, և դո՞ւ
ես մեզ սովորեցնում. և դուրս ա-
րին նորան։
35 Յիսուսը լսեց, որ նորան դուրս ա-
րին. և նորան գտաւ և ասաց նորան.
Դու հաւատո՞ւմ ես Աստուծոյ Որ-
36 դոյն։ Նա պատասխանեց և ասաց.
Տէր, ո՞վ է նա՝ որ հաւատամ նո-
37 րան։ Յիսուսն էլ նորան ասաց. Տե-
սար էլ նորան. և քեզ հետ խօսողն
38 էլ նա ինքն է։ Եւ նա ասաց. Հա-
ւատում եմ, Տէր, և երկրպագեց
39 նորան։ Եւ Յիսուսը ասաց. Ես դա-
տաստանի համար եկայ այս աշխարհ-
քը, որ չտեսնողները տեսնեն, և
տեսնողները կուրանան։
40 Եւ Փարիսեցիներից ոմանք, որ նո-
րա հետ էին, լսեցին այս, և ասա-
ցին նորան. Մի՞թէ մենք էլ կոյր ենք։
41 Յիսուսը նորանց ասաց. Եթէ կոյր
լինէիք, մեղք չէիք ունենալ. բայց
հիմա ասում էք, թէ՝ տեսնում ենք,
նորա համար ձեր մեղքերը մնում են։

Գլ. Ժ.

1 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ.
Ով որ դռնովն չէ մտնում ոչխարների
գաւիթը, այլ ուրիշ կողմից է վեր-
2 ելնում, նա գող է և աւազակ։ Բայց
դռնովը մտնողը, ոչխարների հովիւն
3 է։ Դռնապանը նորա համար բաց է
անում. և ոչխարները նորա ձայնին
լսում են, և իր ոչխարներն իրանց ա-
նունովը կանչում է, և նորանց դուրս
4 է հանում։ Եւ երբոր իր ոչխարները
դուրս է հանում, նորանց առջևից
գնում է, և ոչխարները նորա ետևից
գնում են. վասն զի նորա ձայնը ճա-
5 նաչում են։ Բայց օտարի ետևից
չեն գնում. այլ նորանից փախչում
են, որովհետև օտարների ձայնը չեն
ճանաչում։
6 Այս առակը Յիսուսը ասաց նո-
րանց. բայց նորանք չէին դիտում,
թէ ինչ էր այն որ խօսում էր նո-
7 րանց հետ։ Յիսուսը դարձեալ նո-
րանց ասաց. Ճշմարիտն ճշմարիտն ա-
սում եմ ձեզ. թէ ես եմ ոչխարների

8 դուռը։ Ամենքն՝ որ ինձանից առաջ
եկան, գողեր են և աւազակներ. և
9 ոչխարներն էլ չլսեցին։ Ես եմ դուռը.
եթէ մէկն ինձանով ներս մտնէ, կ'ապ-
րի. և կ'մտնէ և դուրս կ'գայ, և ա-
10 րօտ կ'գտնէ։ Գողն չէ գալիս, բայց
միայն որ գողանայ և սպանէ և կոր-
ցընէ. ես եկայ որ կեանք ունենան,
11 և էլ աւելի ունենան։ Ես եմ բարի
հովիւը. բարի հովիւն իր անձն դնում
12 է ոչխարների վերայ։ Բայց վարձկանն
որ հովիւ չէ, որ ոչխարներն իրը չեն.
տեսնում է գայլին գալիս, և թող-
ում է ոչխարներն և փախչում. և
գայլը յափշտակում է նորանց և ցըր-
13 վում է ոչխարներին։ Եւ վարձկանն
փախչում է, որովհետեւ վարձկան է,
և ոչխարների համար հոգս չունի։
14 Ես եմ բարի հովիւը, և իմիններին
ճանաչում եմ, և իմիններիցն էլ ճա-
15 նաչվում եմ։ Ինչպէս Հայրն է ինձ
ճանաչում; ես էլ ճանաչում եմ Հօրը,
և իմ անձը դնում եմ ոչխարների
16 համար։ Եւ ուրիշ ոչխարներ էլ ու-
նիմ, որ այս դաւիթիցը չեն, և նո-

բանց էլ պէտք է, որ բերեմ. և իմ
ձայնին կ'լսեն, և մէկ հօտ և մէկ հո-
17 վիւ կ'լինին։ Նորա համար իմ Հայրը
սիրում է ինձ, որ իմ անձը դնում
եմ, որպէս զի դարձեալ առնեմ նո-
18 րան։ Ոչ ով նորան վեր չառնում
ինձանից. այլ ես ինքս ինձանից եմ
դնում նորան. իշխանութիւն ունիմ
նորան դնելու և իշխանութիւն ունիմ
նորան դարձեալ առնելու. այս պատ-
ուէրն առի իմ Հօրից։
19 Արդ դարձեալ բաժանմունք եղաւ
20 Հրէից մէջ այս խօսքերի համար։ Եւ
նորանցից շատերն ասում էին. թէ
դեւ ունի, և գժվում է. ինչո՞ւ էք
21 ականջ դնում դորան։ Ուրիշներն ա-
սում էին. Այս խօսքերը դիւահարի
խօսքեր չեն. մի՞թէ դեւը կարող է
կոյրի աչքերը բանալ։
22 Այն ժամանակ Երուսաղէմումը նա-
ւակատիք տօն եղաւ, և ձմեռն էր։
23 Եւ Յիսուսը մտն էր գալիս տաճա-
24 րումը Սողոմոնի սրահի մէջ։ Հրէա-
ներն էլ նորան շրջապատեցին և ա-
սացին նորան. Մինչեւ ե՞րբ մեր հո-

գլխերը թափում ես. եթէ դու ես
Քրիստոսը, համարձակ ասիր մեզ։
25 Յիսուսը պատասխանեց նորանց. Ա-
սացի ձեզ, և չէք հաւատում. այն
գործքերը որ իմ Հօր անունովը գոր-
ծում եմ, նորանք վկայում են ինձ
26 համար։ Բայց դուք չէք հաւատում.
վասն զի իմ ոչխարներիցը չէք, ինչ-
27 պէս որ ասացի ձեզ։ Իմ ոչխարներն
իմ ձայնին լսում են, և ես ճանա-
չում եմ նորանց, և իմ ետեւից գա-
28 լիս են։ Եւ ես յաւիտենական կեանք
եմ տալիս նորանց, և յաւիտեան չեն
կորչիլ, և ոչ ով չյափշտակիլ նորանց
29 իմ ձեռքիցը։ Իմ Հայրն որ նորանց
տուաւ ինձ, ամենից մեծ է, և ոչ ով
կարող չէ իմ Հօր ձեռքիցն յափշտա-
30 կել նորանց։ Ես և Հայրը մէկ ենք։
31 Հրէաները դարձեալ քարեր վեր
32 առան, որ նորան քարկոծեն։ Յիսուսը
նորանց պատասխանեց. Շատ բարի
գործքեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը.
նորանցից ո՞ր գործի համար էք ինձ
33 քարկոծում։ Հրէաները պատասխա-
նեցին և ասացին. Բարի գործքի հա-

մար քեզ չենք քարկոծում, այլ հայ-
հոյութեան համար. և որ դու մարդ
դոլով՝ քո անձն Աստուած ես անում։
34 Յիսուսը նորանց պատասխանեց. Գրը-
ուած չէ՞ ձեր օրէնքումը. Ես ասացի՝
35 թէ դուք աստուածներ էք։ Եթէ
նորանց աստուածներ է ասում, որ Ա-
ստուծոյ խօսքն եղաւ նորանց. (և կա-
36 ըելի չէ որ գիրքը եղծանուի.) Ապ-
նորան որ Հայրը սրբեց և ուղարկեց
աշխարհը, դուք ասում էք. թէ
Հայհոյում ես, որ ասացի. թէ Ա-
37 ստուծոյ Որդի եմ։ Եթէ իմ Հօր գործ-
քը չեմ գործում, մի հաւատաք ինձ։
38 Ապա եթէ գործում եմ, թէ եւ ինձ
էլ չհաւատաք, գոնէ գործքերին հա-
ւատացէք, որ ճանաչէք և հաւա-
տաք, թէ Հայրն ինձանում է և ես
նորա մէջ։
39 Եւ դարձեալ ուզում էին նորան
բռնել, բայց նորանց ձեռքիցը դուրս
40 եկաւ։ Եւ դարձեալ գնաց Յորդա-
նանի այն կողմը, այն տեղը, որ Յո-
հաննէսն էր առաջուց և մկրտում էր.
41 և այն տեղ էր կենում։ Եւ շատերը

նորա մօտ եկան և ասում էին. թէ
42 Յօհաննէսը ոչ մի նշան չգործեց։ Բայց
բոլորն ինչ որ Յօհաննէսը նորա հա-
մար ասաց, ճշմարիտ էր. և այն տեղ
շատերը հաւատացին նորան։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազա-
րոս, Բեթանեայիցը, Մարիամի և
2 նորա քոյր Մարթայի գիւղից։ Մա-
րիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով
օծեց և նորա ոտները սրբեց իր մա-
զերովը. որի եղբայրը Ղազարոս հի-
3 ւանդ էր։ Եւ նորա քոյրերն ուղար-
կեցին նորա մօտ և ասացին. Տէր,
ահա նա՝ որին դու սիրում ես՝ հի-
4 ւանդացել է։ Յիսուսն էլ երբոր լը-
սեց, ասաց. Այն հիւանդութիւնը
մեռնելու համար չէ, այլ Աստուծոյ
փառաց համար. որ Որդին Աստու-
5 ծոյ նորանով փառաւորուի։ Եւ Յի-
սուսը սիրում էր Մարթային և նորա
6 քրոջը և Ղազարոսին։ Եւ երբոր լսեց,
թէ նա հիւանդ է, այն ժամանակ
երկու օր մնաց այն տեղը, ուր էր։

7 Ապա նորանից յետոյ ասաց աշա-
կերտներին. Եկէք դարձեալ գնանք
8 Հրէաստան։ Աշակերտներն ասացին
նորան. Ռաբբի, հիմա Հրէաներն ու-
զում էին քեզ քարկոծել. և դարձ-
9 եալ այն տե՞ղ ես գնում։ Յիսուսը
պատասխանեց. Չէ՞ որ օրը տասներ-
կու ժամ ունի. եթէ մէկը ցերեկը
ման գայ, չի դայթակղել. վասն զի
10 այս աշխարհքի լոյսը տեսնում է։ Իսկ
եթէ մէկը գիշերը ման գայ, կ'դայ-
թակղի. որովհետև լոյս չկայ նորա-
11 նում։ Այս ասաց, և սորանից յետոյ
ասաց նորանց. Մեր Ղազարոս բա-
րեկամը քնեց, բայց կ'գնամ, որ զարթ-
12 նեցնեմ նորան։ Եւ նորա աշակերտ-
ներն ասացին նորան. Տէր, թէ որ
13 քնել է կ'առողջանայ։ Բայց Յիսուսը
նորա մահուան համար էր ասել. բայց
նորանք կարծում էին, թէ քուն քնե-
14 լու համար էր ասում։ Այն ժամանակ
Յիսուսը յայտնի ասաց նորանց. Ղա-
15 զարոսը մեռաւ։ Եւ ես ուրախ եմ ձեզ
համար, որ դուք հաւատաք ինձ, որ
ես այն տեղ չէի. Բայց գնանք նո-

16 բա մօտ։ Եւ ասաց Թովմաս (երկուորեակ կոչուածն) աշակերտակիցներին։
Մենք էլ գնանք նորա հետ մեռնինք։
17 Յիսուսն էլ եկաւ՝ նորան արդէն
չորս օր դերեզմանի մէջ դրուած դը-
18 տաւ։ Եւ Բեթանիա մօտ էր Երու-
սաղէմին տասն եւ հինգ ասպարէզի
19 չափով։ Եւ Հրէաներից շատերը եկել
էին Մարթայի և Մարիամի մօտ, որ
մխիթարեն նորանց իրանց եղբօր մա-
20 սին։ Արդ երբոր Մարթան լսեց, թէ
Յիսուսը գալիս է, գնաց նորան դի-
մաւորելու։ բայց Մարիամը տանը
21 նստած էր։ Եւ ասաց Մարթան Յի-
սուսին։ Տէր, եթէ այս տեղ լինէիր,
22 իմ եղբայրը չէր մեռնիլ։ Բայց հիմա
էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուածա-
նից խնդրես, Աստուած կ'տայ քեզ։
23 Յիսուսը նորան ասաց։ Քո եղբայրը
24 յարութիւն կ'առնէ։ Մարթան նորան
ասաց։ Գիտեմ որ յարութիւն կ'առ-
25 նէ յարութիւնումն՝ յետին օրը։ Յի-
սուսը նորան ասաց։ Ես եմ յարու-
թիւնը և կեանքը։ ինձ հաւատացողը
26 թէ եւ մեռնի էլ, կ'ապրի։ Եւ ամեն

ով որ կենդանի է և ինձ հաւատում
է, յաւիտեան չի մեռնիլ։ հաւատո՞ւմ
27 ես սորան։ Նորան ասաց։ Ա.յո, Տէր,
ես հաւատացել եմ, թէ դու ես Քը-
րիստոսն՝ Աստուծոյ Որդին, թէ պետք
28 է աշխարհք գայիր։ Եւ երբոր այս
ասաց, գնաց թաքուն կանչեց իր Մա-
րիամ քրոջը, և ասաց։ Վարդապե-
29 տը եկել է և կանչում է քեզ։ Նա
երբոր լսեց, շուտով վերկացաւ, և
30 եկաւ նորա մօտ։ Յիսուսը դեռ չէր
եկել գիւղը, այլ այն տեղն էր, ուր
31 Մարթան եկաւ նորա առջեւը։ Բայց
Հրէաներն, որ տանը նորա հետ էին
և նորան մխիթարում էին, երբոր
Մարիամին տեսան, թէ շուտով վեր-
կացաւ և գնաց, նորա ետեւից գնա-
ցին։ ասելով՝ թէ գերեզմանն է գը-
32 նում, որ այն տեղ լայ։ Բայց Մարիամ
երբոր այն տեղ եկաւ, ուր Յիսուսն
էր, և տեսաւ նորան, նորա ոտներն
ընկաւ և ասաց նորան։ Տէր, եթէ
այս տեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
33 նիլ։ Յիսուսն էլ երբոր նորան տեսաւ
որ լայ էր լինում, և նորա հետ ե-

կած Հրէաներն էլ՝ որ լաց էին լինում,
իր հոգովը խռովեցաւ և յուզուե-
34 ցաւ։ Եւ ասաց. Ո՞ւր դրիք նորան.
նորան ասացին. Տէր, եկ և տես։
35 Յիսուսը արտասուեց։ (36) Հրէաներն
ասում էին. Տես ի՞նչպէս էր սիրում
37 նորան։ Նորանցից էլ ոմանք ասում
էին. Մի՞թէ սա որ կոյրի աչքերը
բացաւ, չէր կարող անել՝ որ սա էլ
38 չմեռնի։ Եւ Յիսուսը դարձեալ խռո-
ված եկաւ դերեզմանը. և այն մի
քարայր էր, և մի քար նորա վերայ
39 դրուած։ Յիսուսը ասաց. Այդ քարը
վեր առէք. մեռելի քոյրը՝ Մարթան
ասաց նորան. Տէր, արդէն հոտած
40 է, վասն զի չորս օրուան է։ Յիսուսը
նորան ասաց. Չասացի՞ քեզ, որ եթէ
հաւատաս, Աստուծոյ փառքը կ'տես-
41 նես։ Եւ քարը վեր առին, ուր որ
մեռելը դրուած էր. Յիսուսն էլ իր
աչքերը դէպի վեր բարձրացրեց և
ասաց. Հայր, գոհանում եմ քեզա-
42 նից, որ լսեց ինձ։ Եւ ես գիտէի
որ միշտ լսում ես ինձ. բայց այս
ՀՐՇակայ ժողովրդի համար ասացի, որ

հաւատան թէ դու ուղարկեցիր ինձ։
43 Եւ այս ասելով՝ մեծ ձայնով աղա-
44 ղակեց. Ղազարէ, եկ դուրս։ Եւ մե-
ռելը դուրս եկաւ՝ ոտները և ձեռ-
ները պատանով կապած, և երեսը
վարշամակով պատած։ Յիսուսը նո-
րանց ասաց. Արձակեցէք դորան և
թողէք գնայ։
45 Եւ Հրէաներից շատերը, որ Մա-
րիամի մօտ էին եկել և տեսան ինչ
որ արաւ Յիսուսը, հաւատացին նո-
46 րան։ Եւ նորանցից էլ ոմանք գնա-
ցին փարիսեցիների մօտ, և ասացին
նորանց. ինչ որ Յիսուսը արաւ։
47 Եւ քահանայապետները և փարի-
սեցիները ատեան ժողովեցին, և ա-
սացին. Ի՞նչ անենք, որ այդ մարդը
48 շատ նշաններ է անում։ Եթէ դորան
այդպէս թողենք, ամենքը կ'հաւա-
տան դորան, և Հռոմայեցիք կ'գան
վեր կ'առնեն մեր երկիրն էլ և ազգն
49 էլ։ Եւ նորանցից մէկը՝ Կայիափան,
որ այն տարուայ քահանայապետն էր,
ասաց նորանց. Դուք ոչինչ չգիտէք,
50 Եւ չէք էլ մտածում, թէ լաւ է մեզ

համար՝ որ մէկ մարդ մեռնի ժողո-
վրդի վերայ, քան թէ բոլոր ազգը
51 կորչի։ Բայց սա իրանից չասաց. այլ
որովհետեւ այն տարուայ քահանա-
յապետն էր, մարգարէացաւ՝ թէ Յի-
սուսը պիտի մեռնէր ազգի համար։
52 Եւ ոչ թէ միայն ազգի համար, այլ
որ Աստուծոյ ցրուած որդիքն էլ մէկ
տեղ ժողովէ։
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ ա-
54 րին, որ նորան սպանեն։ Յիսուսն էլ
համարձակ չէր մտնի դալիս Հրէից
մէջ. այլ այն տեղից գնաց մի երկիր,
անապատի մօտ, Եփրայեմ ասուած
քաղաքը. և այն տեղ էր կենում իր
աշակերտների հետ։
55 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և
այն դաւառից շատերը զատկից ա-
ռաջ վեր ելան Երուսաղէմ, որ իրանց
56 անձները սրբեն։ Եւ որոնում էին
Յիսուսին, և իրար ասում էին՝ տա-
ճարումը կանգնած. Ի՞նչպէս է երե-
ւում ձեզ. մի՞թէ այս տօնին չի դալ.
բայց քահանայապետները և փարի-
սեցիները հրաման էին տուել, որ՝ ե-

թէ մէկը գիտենայ թէ ուր է, իմաց
տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յիսուսը զատկից վեց օր առաջ
եկաւ Բեթանիա, որ տեղ մեռեալ
Ղազարոսն էր, որին մեռելներից յա-
2 րոյց։ Եւ այն տեղ հացկերութիւն ա-
րին նորա համար. և Մարթա ծա-
ռայում էր, և Ղազարոսը նորա հետ
3 նստողներից մէկն էր։ Մարիամն էլ
մի լիտր նարդոսի աղնիւ մեծագին
իւղ առաւ, Յիսուսի ոտները օծեց,
և իր մազերովը սրբում էր նորա ոտ-
ները. և տունը լցուեցաւ իւղի հո-
4 տովը։ Եւ ասաց նորա աշակերտնե-
րից մէկը՝ Յուդա Սիմոնեան Իսկա-
րիոտացին, որ նորան մատնելու էր.
5 Ինչո՞ւ համար այդ իւղը երեք հա-
րիւր դենարի չ՚ծախուեցաւ, և աղ-
6 քատներին տրուեցաւ։ Բայց սա ա-
սաց, ոչ թէ որովհետեւ աղքատների
համար նորա հոգն էր. այլ որ գող
էր՝ և քսակը ունէր, և ընկածը պա-
7 հում էր։ Յիսուսն էլ ասաց. Թոյլ

տուր դորան, նա իմ պատանքի օր-
8 ուան համար էր պահել այդ։ Քանզի
աղքատներին միշտ ձեզ հետ ունիք.
բայց ինձ միշտ չ'ունիք։
9 Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գի-
տաց, թէ նա այն տեղ է, և եկան,
ոչ թէ միայն Յիսուսի համար, այլ որ
Ղազարոսին էլ տեսնեն, որին մե-
10 ռելներից յարոյց։ Քահանայապետ-
ներն էլ խորհուրդ արին, որ Ղազա-
11 րոսին էլ սպանեն։ Վասն զի Հրէա-
ներից շատերը նորա պատճառովը դը-
նում էին և հաւատում էին Յիսուսին։
12 Նորա հետեւեալ օրը շատ ժողովուրդ,
որ եկել էին տօնը, երբոր լսեցին, թէ
13 Յիսուսը գալիս է Երուսաղէմ. Ար-
մաւի ծառերի ճղեր առին, և դուրս
գնացին նորա առջեւը, աղաղակում
էին. Ովսաննայ, օրհնեալ որ Տէրոջ
անունովը գալիս ես, ով Իսրայէլի
14 թագաւոր։ Եւ Յիսուսը մի յաւանակ
գտաւ, և նորա վերայ նստեց. ինչ-
15 պէս գրուած է՝ Ասէ. Մի վախենար,
Սիօնի աղջիկ, ահա քո թագաւորը
գալիս է՝ էշու յաւանակի վերայ նըս-

16 տած։ Եւ նորա աշակերտներն առաջ
չ'իմացան այս բանը. բայց երբոր Յի-
սուսը փառաւորուեցաւ՝ այն ժամա-
նակ յիշեցին, թէ այս նորա համար
գրուածն էր. և այն բանը արին նո-
17 րան։ Եւ ժողովուրդն՝ որ նորա հետ էր,
վկայում էր, թէ Ղազարոսին գերեզ-
մանիցը դուրս կանչեց. և մեռելնե-
18 րից յարոյց նորան։ Եւ նորա համար
էլ ժողովուրդը գնաց նորա առջեւը,
վասն զի լսեցին թէ նա արել էր այն
19 նշանը։ Բայց փարիսեցիներն իրար
մէջ ասում էին. Տեսնո՞ւմ էք, որ ո-
չինչ օգուտ չունիք. ահա աշխարհքը
նորա հետեւից գնաց։
20 Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նո-
րանցից, որ եկել էին այն տեղ, որ
21 երկրպագեն այն տօնումը։ Նորանք
եկան Փիլիպպոսի մօտ որ Գալիլեայի
Բեթսայիդայիցն էր, նորան խնդրում
էին և ասում. Տէր, կամենում ենք
22 Յիսուսին տեսնել։ Փիլիպպոսը գալիս է
Անդրէասին ասում. Անդրէասն և Փի-
23 լիպպոսն ասում են Յիսուսին։ Յիսուսն
էլ պատասխանեց նորանց՝ և ասաց.

ժամը հասաւ, որ Որդին մարդոյ փա-
24 ռաւորուի։ Ճշմարիտն ճշմարիտն ա-
սում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի
մէջ չ'ընկնի և մեռնի, ինքը մէնակ կը
մնայ. բայց եթէ մեռնի, շատ պտուղ
25 կ'բերէ։ Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նո-
րան, և իր անձն ատողը այս աշխարհ-
քումը, յաւիտենական կենաց մէջ կը
26 պահէ նորան։ Եթէ մէկը ծառայէ ինձ,
թողնա իմ ետեւից դայ. և ուր ես եմ,
այն տեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի.
եթէ մէկը ծառայէ ինձ, Հայրը կ'պատ-
27 ուէ նորան։ Հիմա իմ անձը խռոված
է. և ի՞նչ ասեմ. Հայր, ազատիր ինձ
այս ժամիցը. սակայն իսկ սորա հա-
28 մար եկայ այս ժամի մէջ։ Հայր, փառա-
ւորիր քո անունը։ Եւ երկնքիցը ձայն ե-
կաւ, Ես փառաւորեցի էլ և դարձեալ
29 կ'փառաւորեմ։ Եւ ժողովուրդն, որ
կանգնած էր և լսում էր, ասում է-
ին, Որոտմունք եղաւ. ուրիշներն ա-
սում էին. Հրեշտակ խօսեց նորա
30 հետ։ Յիսուսը պատասխանեց և ա-
սաց. Այս ձայնը ոչ թէ ինձ համար
31 եղաւ, այլ ձեզ համար։ Հիմա դա-

տաստան է այս աշխարհքի. հիմա
այս աշխարհքի իշխանը դուրս կ'դց-
32 ուի։ Եւ ես երբոր բարձրանամ երկ-
րիցը, ամենքին կ'քաշեմ ինձ մօտ։
33 Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, թէ
34 ինչպիսի մահով պիտի մեռնի։ Ժողո-
վուրդը պատասխանեց նորան. Մենք
օրէնքիցը լսեցինք, թէ Քրիստոսը յա-
ւիտեան կ'կենայ. և դու ի՞նչպէս ես
ասում, թէ պէտք է Որդին մարդոյ
բարձրանայ. ո՞վ է այն Որդին մարդոյ։
35 Յիսուսն էլ ասաց նորանց. Մի քիչ
ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ է.
գնացէք, քանի որ լոյսն ունիք, որ
խաւարը ձեզ չ'հասնէ. և խաւարու-
մը գնացողը չէ գիտում, Ի՞նչ է
36 գնում։ Քանի որ լոյսն ունիք, հա-
ւատացէք լուսոյն, որ լուսոյ որդիք
լինիք։ Յիսուսը այս բանը խօսեց, և
գնաց թաքցուեցաւ նորանցից։
37 Եւ թէպէտ այնքան նշաններ նա
արել էր նորանց առջեւ. նորանք չէ-
38 ին հաւատում նորան. որ Եսայի մար-
գարէի խօսք կատարուի, որ ասաց.
Տէր, ո՞վ հաւատաց մեր խօսքին, և

Տիրոջ բաղուկը ո՞ւմ յայտնուեցաւ։
39 Նորա համար չէին կարողանում հա-
ւատալ. վասն զի Եսային դարձեալ
40 ասում է. Նորանց աչքերը կուրաց-
րեց, և նորանց սրտերը թմրացրեց,
որ աչքով չ՚տեսնեն, և սրտով չ՚իմա-
նան, և դառնան՝ և ես բժշկեմ նո-
41 րանց։ Եսային սա ասաց, երբոր նո-
րա փառքը տեսաւ, և նորա համար
42 խօսեց։ Բայց և այնպէս իշխանների-
ցը շատերը հաւատացին նորան. սա-
կայն փարիսեցիների պատճառովը չէ-
լին դաւանում, որ ժողովարանիցը
43 դուրս չ՚դցուին։ Վասն զի մարդկանց
փառքն աւելի սիրեցին քան թէ Աս-
տուծոյ փառքը։
44 Եւ Յիսուսը աղաղակում էր և ա-
սում. Ինձ հաւատացողը չէ թէ ինձ
է հաւատում, այլ ինձ ուղարկողին։
45 Եւ ինձ տեսնողը, ինձ ուղարկողին է
46 տեսնում։ Ես լոյս եկայ աշխարհքը, որ
ամեն ինձ հաւատացողը խաւարի մէջ
47 չ՚մնայ։ Եւ եթէ մէկն իմ խօսքերին
լսէ և չ՚հաւատայ, ես չեմ դատիլ
նորան. քանզի ես չ՚եկայ որ աշխարհ-

քը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհ-
48 քը։ Ինձ անարգողը և իմ խօսքերը
չ՚ընդունողը ունի իրան դատողին, այն
խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ՚դատէ
49 նորան յետին օրը։ Որովհետեւ ես
իմ անձիցը չ՚խօսեցի. բայց ինձ ու-
ղարկող Հայրը, նա պատուէր տուաւ
ինձ, թէ ինչ պիտի ասեմ և ինչ պիտի
50 խօսեմ։ Եւ գիտեմ, որ նորա պատ-
ուիրանքը յաւիտենական կեանք է.
ուրեմն ինչ որ ես խօսում եմ, ինչ-
պէս Հայրն ասաց ինձ՝ այնպէս եմ
խօսում։

ԳԼ. ԺԳ

1 Զատկի տօնից առաջ՝ Յիսուսը գի-
տաց, որ իր ժամը հասել է, որ այս
աշխարհքից փոխուի դէպի Հայրը,
իրաններին՝ որ այս աշխարհքումն են՝
սիրեց. և մինչեւ վերջը սիրեց նո-
րանց։
2 Եւ երբոր ընթրիք էր լինում, սա-
տանան արդէն Յուդա Սիմոնեան Իս-
կարիոտացու սրտի մէջ էր դցել, որ
3 մատնէ նորան։ Յիսուսը գիտենալով

որ Հայրն ամեն բան իր ձեռքն է
տուել, և որ Աստուածանից դուրս
եկաւ, և Աստուծոյ մօտ է գնում.
4 Ընթրիքիցը վերկացաւ և հանդերձ-
ները վայր դրաւ, և մի ղենջակ ա-
5 ռաւ իր մէջքը պատեց։ Յետոյ ջուր
ածեց կոնքը, և սկսեց աշակերտների
ոտները լուանալ, և այն ղենջակովը
6 սրբել որ մէջքին պատած էր։ Եւ Սի-
մոն Պետրոսի մօտ եկաւ. և նա նո-
րան ասաց. Տէր, դո՞ւ ես իմ ոտ-
7 ները լուանում։ Յիսուսը պատասխա-
նեց և ասաց նորան. Ինչ որ ես ա-
նում եմ, դու հիմա չես իմանում,
8 բայց սորանից յետոյ կ'իմանաս։ Պետ-
րոսը նորան ասաց. Դու իմ ոտները
չես լուանալ յաւիտեան. Յիսուսը
պատասխանեց նորան. Եթէ քեզ
չ'լուանամ, ինձ հետ բաժին չունիս։
9 Սիմոն Պետրոսը ասաց նորան. Տէր,
ոչ թէ իմ ոտները միայն, այլ իմ
10 ձեռները և գլուխն էլ։ Յիսուսը նո-
րան ասաց. Լուացածին բան պէտք
չէ, բայի ոտները լուանալ. այլ բո-
լորովին մաքուր է. և դուք մաքուր

11 էք, բայց ոչ թէ ամենքդ։ Վասն զի
դիտէր իրան մատնիչին. նորա հա-
մար ասաց. Ոչ թէ ամենքդ մաքուր
12 էք։ Եւ երբոր նորանց ոտները լուա-
ցաւ, իր հանդերձներն առաւ՝ և
դարձեալ սեղան նստեց, և նորանց
13 ասաց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք
ինձ կանչում էք վարդապետ և Տէր,
14 և լաւ էք ասում, քանզի եմ։ Արդ
եթէ ես՝ Տէրս և վարդապետս՝ ձեր
ոտները լուացի, դուք էլ պէտք է
15 իրար ոտները լուանաք։ Վասն զի ձեզ
օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի
16 արի, դուք էլ անէք։ Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ. Ծառան
իր տիրոջից մեծ չէ. ոչ էլ ուղար-
կըվածը մեծ է իրան ուղարկողից։
17 Եթէ այս դիտէք, երանելի էք՝ թէ
18 որ այս անէք։ Ձեր բոլորիդ համար
չեմ ասում. ես դիտեմ նորանց, որ
ընտրեցի. բայց որ գիրքը կատարուի,
Ով նա որ ինձ հետ հաց էր ուտում,
ինձ դէմ իրան կրունկը բարձրացրեց։
19 Հիմիկուց ասում եմ ձեզ՝ լինելուց
առաջ, որ երբոր լինի՝ հաւատաք թէ

20 ես եմ։ Ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան, որ
ես կ'ուղարկեմ, ինձ է ընդունում. և
ինձ ընդունողը ինձ ուղարկողին է
ընդունում։
21 Յիսուսն այս ասելով տրտմեցաւ
հոգովը, և վկայեց և ասաց. Ճշմա-
րիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ
22 Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։ Աշա-
կերտներն էլ իրար մտիկ էին տա-
լիս տարակուսած, թէ ո՞ւմ համար է
23 ասում։ Եւ նորա աշակերտներից մէկը
Յիսուսի գոգին նստած էր, որին Յի-
24 սուսը սիրում էր։ Սիմոն Պետրոսը
նորան ակնարկեց հարցնել՝ թէ նա
25 ո՞վ է, որի համար ասում է։ Եւ նա
Յիսուսի լանջքովը ընկած, ասաց նո-
26 րան. Տէր, ո՞վ է։ Յիսուսը պատաս-
խանեց. Նա է՝ որ ես պատառը թաց
կ'անեմ և նորան կ'տամ. և պատա-
ռը թաց արաւ և տուաւ Յուդա Սի-
27 մոնեան Իսկարիոտացոյն։ Եւ պատա-
ռիցն յետոյ սատանան մտաւ նորա
մէջ. և Յիսուսը նորան ասաց. Ինչ որ
28 անում ես շուտով արա։ Եւ այս բա-

նը սեղան նստողներից ոչ ով չիմա-
ցաւ, թէ ի՞նչ պատճառով ասաց նո-
29 րան։ Վասնզի ոմանք կարծում էին,
թէ՝ որովհետեւ Յուդան քսակն ու-
նէր, Յիսուսը նորան ասաց, թէ առ՝
ինչ որ այս տօնին պէտք է մեզ. կամ
30 թէ՝ աղքատներին բան տայ։ Եւ նա
երբոր պատառն առաւ, շուտով դուրս
գնաց. և գիշեր էր։
31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուսն
ասաց. Հիմա Որդին մարդոյ փառա-
ւորուեցաւ. և Աստուած նորանում
32 փառաւորուեցաւ։ Եթէ Աստուած նո-
րանում փառաւորուեցաւ, Աստուած
էլ նորան կ'փառաւորէ իր անձումը.
33 և շուտով կ'փառաւորէ նորան։ Որդ-
եակք, տակաւին մի քիչ ժամանակ
էլ ձեզ հետ եմ. ինձ կ'որոնէք, և
ինչպէս Հրէաներին ասացի, թէ Որ
տեղ որ ես եմ գնում, դուք չէք
կարող գալ. և հիմա էլ ձեզ եմ ա-
34 սում։ Նոր պատուիրանք եմ տալիս
ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ
սիրեցի. որ դուք էլ իրար սիրէք։
35 Սորանով կ'գիտենան ամենքը թէ իմ

աշակերտներն էք, եթէ իրար վերայ
36 սէր ունենաք։ Սիմոն Պետրոս նորան
ասաց. Տէր, ո՞ւր ես գնում. Յիսու-
սը պատասխանեց նորան. Որ տեղ որ
գնում եմ, դու հիմա չես կարող իմ
ետեւից գալ. բայց յետոյ իմ ետեւից
37 կ'գաս։ Պետրոսը նորան ասաց. Տէր,
ինչո՞ւ չեմ կարող հիմա քո ետեւից
գալ. իմ անձը քեզ համար կ'դնեմ։
38 Յիսուսը պատասխանեց նորան. Քո
անձը՞ կ'դնես ինձ համար. ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ, ոչ հաւը
դեռ չի խօսիլ, որ դու երեք անգամ
կ'ուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

1 Ձեր սրտերը թող չխռովին. Աստու-
ծոյն հաւատացէք, և ինձ հաւատա-
2 ցէք։ Իմ Հօր տանը շատ բնակարան-
ներ կան. ապա թէ ոչ ես ձեզ կ'ա-
սէի. գնում եմ ձեզ համար տեղ
3 պատրաստելու։ Եւ եթէ գնամ և ձեզ
համար տեղ պատրաստեմ, դարձեալ
կ'գամ և ձեզ ինձ մօտ կ'առնեմ.
4 որ ուր ես եմ, դուք էլ լինիք։ Եւ

որ տեղ որ ես գնում եմ՝ գիտէք,
և ճանապարհը գիտէք։
5 Թովմասը նորան ասաց. Տէր, չենք
գիտում որ տեղ ես գնում. և ի՞նչ-
պէս կարող ենք ճանապարհը գիտե-
6 նալ։ Յիսուսը նորան ասաց. Ես եմ
ճանապարհը և ճշմարտութիւնը և
կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ,
7 եթէ ոչ ինձանով։ Եթէ ինձ գիտե-
նայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք. և
սորանից յետոյ կ'գիտենաք նորան և
տեսաք նորան։
8 Փիլիպպոսը նորան ասաց. Տէր, Հայ-
րը ցոյց տուր մեզ, և բաւական է
9 մեզ։ Յիսուսը նորան ասաց. Այսքան
ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չճա-
նաչեցի՞ր, Փիլիպպոս. ինձ տեսնողը
Հօրը տեսաւ. և դու ի՞նչպէս ես ա-
10 սում. Հայրը ցոյց տուր մեզ։ Չե՞ս
հաւատում, որ ես Հօր մէջ եմ, և
Հայրն ինձանում է, այն բանն՝ որ ես
խօսում եմ ձեզ հետ, իմ անձիցը
չեմ խօսում. բայց Հայրն՝ որ ինձա-
նում բնակած է, նա է գործում
11 գործքերը։ Հաւատացէք ինձ, որ ես

Հօր մէջ եմ, և Հայրն ինձանում է։
12 Ամէն թէ ոչ, իսկ այն գործքերի հա-
մար հաւատացէք ինձ. ճշմարիտն ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ. Ով ինձ հա-
ւատացողը այն գործքերն որ ես գոր-
ծում եմ, նա էլ կ'գործէ, և նորա-
նից էլ աւելի մեծ բաներ կ'գործէ.
վասն զի ես իմ Հօր մօտ եմ գնում։
13 Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անունո-
վը, այն կ'անեմ, որ Հայրը փառա-
14 ւորուի Որդումը։ Եթէ իմ անունովը
15 մի բան խնդրէք, ես կ'անեմ։ Եթէ
ինձ սիրում էք, իմ պատուիրանք-
16 ները պահեցէք։ Եւ ես Հօրը կ'աղա-
չեմ, և ուրիշ Մխիթարիչ կ'տայ ձեզ,
17 որ մնայ ձեզ հետ յաւիտեան. ճըշ-
մարտութեան Հոգին, որին աշխարհքս
կարող չէ ընդունել. վասն զի չէ տես-
նում նորան. և ոչ ճանաչում նորան.
բայց դուք նորան ճանաչում էք,
վասն զի ձեզ մօտ է մնում և ձեզ
18 հետ կ'լինի։ Ձեզ որբ չեմ թողել.
19 կ'դամ ձեզ մօտ։ Մի փոքր ժամա-
նակ էլ, և աշխարհքն էլ չի տեսնիլ
ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ,

վասն զի ես կենդանի եմ, և դուք
20 կենդանի կ'լինիք։ Այն օրը դուք կը
ճանաչէք, որ ես իմ Հօր մէջ եմ, և
դուք ինձանում, և ես ձեզանում։
21 Ով որ իմ պատուիրանքներն ունի և
նորանց պահում է, նա է ինձ սիրո-
ղը. և ինձ սիրողը իմ Հօրիցը կ'սիր-
ուի. և ես կ'սիրեմ նորան, և ինձ
կ'յայտնեմ նորան։
22 Ասաց նորան Յուդան՝ ոչ թէ Իս-
կարիոտացին, Տէր, ի՞նչ է, որ մեզ
կ'յայտնես քեզ՝ և աշխարհքին ոչ։
23 Յիսուսը պատասխանեց և նորան ա-
սաց. Եթէ մէկն ինձ սիրում է, իմ
խօսքը կ'պահէ և իմ Հայրը կ'սիրէ
նորան. և նորա մօտը կ'գանք և բը-
24 նակութիւն կ'անենք նորա մօտ։ Ինձ
չսիրողը իմ խօսքերը չէ պահում. և
այն խօսքը որ լսում էք՝ իմն չէ, այլ
25 ինձ ուղարկող Հօրը։ Այս խօսեցի ձեզ
26 հետ՝ քանի որ ձեզ մօտ եմ։ Բայց
Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայ-
ը կ'ուղարկէ իմ անունովը, նա ամեն
բան կ'սովորեցնէ ձեզ, և կ'յիշեցնէ
27 ձեզ ամեն ինչ որ ձեզ ասացի։ Խա-

ղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խա-
ղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ
ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս
եմ ձեզ. ձեր սիրտը չ'խռովի և չ'վա-
28 խենայ։ Լսեցիք, որ ես ասացի ձեզ,
Ես գնում եմ, և կ'գամ ձեզ մօտ.
եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ'լի-
նէիք՝ որ ասացի, Հօր մօտ եմ գնում.
վասն զի իմ Հայրը մեծ է ինձանից։
29 Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց առաջ.
30 որ երբոր լինի, հաւատաք։ Այլ ես
շատ չեմ խօսիլ ձեզ հետ, վասն զի
այս աշխարհքի իշխանը գալիս է, և
31 ինձանում ոչինչ չունի։ Այլ որպէս զի
աշխարհքը գիտենայ, թէ ես սիրում
եմ Հօրը. և ինչպէս Հայրը պատուի-
րեց ինձ, այնպէս եմ անում. վեր կա-
ցէք, գնանք այս տեղից։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայ-
2 րը մշակն է։ Ամեն ճիւղ, որ ինձա-
նում է և պտուղ չէ բերում, նորան
կտրում է. և ամեն պտուղ բերողին
մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր

3 լինի։ Դուք արդէն մաքուր էք այն
խօսքի համար, որ ձեզ հետ խօսեցի։
4 Կացէք ինձանում՝ և ես ձեզանում.
ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող
չէ պտուղ բերել, եթէ որթումը չը-
մնայ. այսպէս ոչ էլ դուք՝ եթէ ին-
5 ձանում չ'մնաք։ Ես որթն եմ՝ և դուք
ճիւղերը. նա՝ որ ինձանում է մնում,
և ես նորանում, նա շատ պտուղ է
բերում. որովհետեւ առանց ինձ չէք
6 կարող ոչինչ անել։ Եթէ մէկն ինձա-
նում չէ մնում, նա դուրս կ'դցուի
ինչպէս ճիւղը, և կ'չորանայ. և ժո-
ղովում են նորանց և կրակի մէջ դը-
7 ցում, և այրվում է։ Եթէ կենաք ին-
ձանում՝ և իմ խօսքերը ձեզանում
կենան, ինչ որ էլ կամենաք, կ'խընդ-
8 րէք, և կ'լինի ձեզ։ Սորանով փառա-
ւորուեցաւ իմ Հայրը, որ շատ պտուղ
բերէք. և իմ աշակերտները լինիք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, ես
էլ ձեզ սիրեցի. կացէք իմ սիրոյ մէջ։
10 Եթէ իմ պատուիրանքները պահէք,
իմ սիրոյ մէջը կ'կենաք. ինչպէս ես
իմ Հօր պատուիրանքները պահեցի,

11 և կենում եմ նորա սիրոյ մէջ։ Այս
խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախու-
թիւնը ձեզանում մնայ, և ձեր ուրա-
12 խութիւնը լցուած լինի։ Սա է իմ պատ-
ուիրանքը, որ իրար սիրէք, ինչպէս
13 ես ձեզ սիրեցի։ Ոչ ով նորանից ա-
ւելի մեծ սէր չունի, որ մէկն իր ան-
ձը դնէ իր բարեկամների համար։
14 Դուք իմ բարեկամներն էք, եթէ ա-
նէք ինչ որ ես պատուիրում եմ ձեզ։
15 Այլ ես ծառայ չեմ ասում ձեզ,
վասն զի ծառան չէ գիտում, թէ իր
տէրն ինչ է գործում. բայց ձեզ բա-
րեկամ ասացի, վասն զի ամեն ինչոր
16 լսեցի իմ Հօրից, իմացրի ձեզ։ Ոչ
թէ դուք ինձ ընտրեցիք. այլ ես
ընտրեցի ձեզ, և ձեզ դրի, որ դուք
գնաք և պտուղ բերէք. և ձեր պտու-
ղը մնայ. որպէս զի ինչ որ իմ Հօ-
րից խնդրէք իմ անունովը, տայ
17 ձեզ։ Սա եմ պատուիրում ձեզ, որ
իրար սիրէք։
18 Եթէ աշխարհը ձեզ ատում է, դի-
տացէք, որ ինձ ձեզանից առաջ է
19 ատել։ Եթէ այս աշխարհքից լի-

նէիք, ապա աշխարհքն իրանը կ'սի-
րէր. բայց որովհետեւ աշխարհքից
չէք. այլ ես ձեզ ընտրեցի աշխարհ-
քից, նորա համար աշխարհքն ատում
20 է ձեզ։ Յիշեցէք այն խօսքն, որ ես
ասացի ձեզ. Ոչ ծառան իր տիրոջից
մեծ չէ. եթէ ինձ հալածեցին, ձեզ
էլ կ'հալածեն, եթէ իմ խօսքը պա-
21 հեցին՝ ձերն էլ կ'պահեն։ Բայց այս
ամենը կ'անեն ձեզ իմ անունի հա-
մար. քանզի չ'ճանաչեցին ինձ ու-
22 ղարկողին։ Եթէ ես չէի եկել և նո-
րանց հետ խօսացել, նորանք մեղք
չէին ունենալ. բայց հիմա պատճառ
23 չունին իրանց մեղաց համար։ Ինձ
24 ատողն իմ Հօրն էլ է ատում։ Եթէ
այն գործքերը չէի գործել նորանց
միջումն, որ մէկ ուրիշը չ'գործեց,
մեղք չէին ունենալ. բայց հիմա տե-
սան էլ, և ատեցին ինձ էլ և իմ Հօրն
25 էլ։ Այլ որպէս զի այն խօսքը կա-
տարուի, որ նորանց օրէնքումը գրը-
ուած է, թէ, Զուր տեղն ատեցին
26 ինձ։ Բայց երբոր Մխիթարիչը կ'գայ,
որ ես Հօրից կ'ուղարկեմ ձեզ, ճըշ-

մարտութեան Հոգին , որ Հօրիցն է
դուրս գալիս , նա կ'վկայէ ինձ հա-
27 մար։ Եւ դուք էլ կ'վկայէք , վասն զի
սկզբիցն ինձ հետ էք։

ԳԼ. ԺԶ

1 Այս խօսեցի ձեզ հետ , որ չդայթակ-
2 ղիք։ Իրանց ժողովարաններիցը ձեզ
դուրս կ'հանեն. բայց ժամանակ կ'դայ՝
որ ամեն ով որ սպանէ ձեզ, կ'կար-
ծէ , թէ Աստուծոյ պաշտօն է մատու-
3 ցանում։ Եւ սա կ'անեն ձեզ. որովհետեւ
ոչ Հօրը ճանաչեցին և ոչ ինձ։
4 Բայց այս էլ խօսեցի ձեզ հետ , որ
երբոր ժամանակը դայ , սորանք յի-
շէք , թէ ես ասացի ձեզ։ Բայց այս
բաներն սկզբից չասացի ձեզ. քանզի
ես ձեզ հետ էի։
5 Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ եմ
գնում. և ձեզանից ոչ մէկը չէ հար-
6 ցընում ինձ. Ո՞ւր ես գնում։ Այլ
որովհետեւ այս բաները խօսեցի ձեզ
հետ , տրտմութիւնը լցրեց ձեր սիր-
7 տը։ Բայց ես ճշմարտութիւնն եմ
ասում ձեզ, որ լաւ է ձեզ համար,

որ ես գնամ. վասն զի եթէ չգնամ,
Մխիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց
եթէ գնամ, նորան կ'ուղարկեմ ձեզ
8 մօտ։ Եւ նա՝ երբոր դայ՝ աշխարհ-
քին կ'յանդիմանէ մեղայ համար , և
արդարութեան համար , և դատաս-
9 տանի համար։ Մեղայ համար , որով-
10 հետեւ ինձ չեն հաւատում։ Արդա-
րութեան համար , որովհետեւ ես իմ
Հօր մօտ եմ գնում , և ինձ այլ եւս
11 չէք տեսնել։ Եւ դատաստանի հա-
մար , որովհետեւ այս աշխարհքի իշ-
12 խանը դատապարտուած է։ Ցակաւին
շատ բան ունիմ ձեզ ասելու , բայց
13 հիմա չէք կարող տանել։ Բայց երբ-
որ նա՝ ճշմարտութեան Հոգին կ'դայ ,
նա կ'առաջնորդէ ձեզ ամեն ճշմար-
տութեան մէջ. վասն զի իր անձիցը
չի խօսիլ , այլ ինչ որ կ'լսէ՝ կ'խօսի ,
14 և դալու բաները կ'պատմէ ձեզ։ Նա
ինձ կ'փառաւորէ , վասն զի իմիցը
15 կ'առնէ և կ'պատմէ ձեզ։ Ամեն ինչ
որ Հայրն ունի՝ իմն է. նորա համար
ասացի ձեզ , թէ իմիցը կ'առնէ և կը
16 պատմէ ձեզ։ Մի քիչ ժամանակ էլ , և

չէք տեսնել ինձ. և դարձեալ մի
քիչ, և կ'տեսնէք ինձ. որովհետեւ
ես Հօր մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից ոմանք իրար
ասում էին. Սա ի՞նչ է, որ ասում
է մեզ. Մի քիչ ժամանակ՝ և չէք տես-
նել ինձ, և դարձեալ մի քիչ, և
կ'տեսնէք ինձ. և, թէ ես Հօր մօտ
18 եմ գնում։ Եւ ասում էին. Ի՞նչ է
այն որ ասում է՝ քիչ ժամանակ. չենք
19 դիտում, թէ ինչ է խօսում։ Եւ Յի-
սուսն իմացաւ, որ ուզում էին հար-
ցընել իրան, և ասաց նորանց. Դո-
ւքա՞ համար էք հարցնում իրար, որ
ասացի. Ի՞ Մի քիչ ժամանակ, և չէք
տեսնել ինձ, և դարձեալ մի քիչ, կը-
20 տեսնէք ինձ։ Ճշմարիտն ճշմարիտն ա-
սում եմ ձեզ. որ դուք լաց կ'լինիք
և կ'ողբաք և աշխարհքը կ'ուրախա-
նայ. դուք կ'տրտմիք, այլ ձեր տրտ-
21 մութիւնն ուրախութիւն կ'լինի։ Կինն,
երբոր ծնում է, տրտմութիւն ունի,
վասն զի նորա ժամանակն հասել է,
բայց երբոր երեխան ծնեց, նեղու-
թիւնն էլ չէ յիշում այն ուրախու-

թեան համար, որ մի մարդ ծնուե-
22 ցաւ աշխարհքի մէջ։ Եւ դուք էլ հի-
մա տրտմութիւն ունիք, բայց դարձ-
եալ կ'տեսնեմ ձեզ, և ձեր սիրտը
կ'ուրախանայ. և ձեր ուրախութիւնը
23 ոչ ոք չի առնել ձեզանից։ Եւ այն օ-
րը ոչինչ չէք հարցնել ինձ. ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ ինչ
որ Հօրից խնդրէք իմ անունովը կը-
24 տայ ձեզ։ Մինչեւ հիմա ոչինչ չխնդ-
րեցիք իմ անունովը. խնդրեցէք և
կ'առնէք, որ ձեր ուրախութիւնը կա-
25 տարեալ լինի։ Այս բաներն առակով
խօսեցի ձեզ հետ. բայց ժամանակ
կ'գայ, որ էլ առակով չեմ խօսիլ ձեզ
հետ. այլ յայտնապէս կ'պատմեմ ձեզ
26 Հօր համար։ Այն օրումն իմ անունո-
վը կ'խնդրէք. և չեմ ասում ձեզ, թէ
27 ես ձեզ համար կ'աղաչեմ Հօրը։ Քան-
զի Հայրն ինքն սիրում է ձեզ. որով-
հետեւ դուք ինձ սիրել էք և հաւա-
տացել էք, թէ ես Աստուածմանից
28 դուրս եկայ։ Հօրից դուրս եկայ և
եկայ աշխարհք. դարձեալ թողում
եմ աշխարհքը և Հօր մօտ գնում։

29 Աշակերտները նորան ասացին. Ա-
հա հիմա յայտնի ես խօսում, և ոչ
30 մի առակ չես ասում։ Հիմա գիտենք,
որ դու բոլորը գիտում ես. և պէտք դ
չէ, որ մէկը հարցնէ քեզ. սորանով
հաւատում ենք, թէ դու Աստուա-
31 ծանից դուրս եկար։ Յիսուսը պա-
տասխանեց նորանց. Հիմա հաւատո՞ւմ
32 էք։ Ահա ժամանակ կ'գայ, և հիմա
եկած է, որ ամեն մէկդ կ'ցրուիք իր
տեղը, և ինձ մենակ կ'թողէք. բայց
մենակ չեմ. վասն զի Հայրն ինձ հետ
33 է։ Այս խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կ'ունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուսն այս խօսեց, և իր աչքերը բարձրացրեց դէպի երկինքն և ասաց. Հայր, ժամը հասել է, փառաւորիր քո Որդդդ, որ քո Որդին էլ քեզ
2 փառաւորէ։ Ինչպէս նորան իշխանութիւն տուիր ամեն մարմնոյ Քրս

որ յաւիտենական կեանք տայ այն ա-
3 մենին՝ որ տուիր նորան։ Եւ սա է
յաւիտենական կեանքը, որ ճանաչեն
քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նո-
րան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիս-
4 տոսին։ Ես քեզ փառաւորեցի
երկրի վերայ. այն գործը կատարե-
5 ցի, որ տուիր ինձ՝ որ անեմ։ Եւ հի-
մա, փառաւորիր ինձ դու, Հայր,
քեզ մօտ այն փառքովն, որ աշխարհ-
քի լինելուցն առաջ ունէի քեզ մօտ։
6 Քո անունն յայտնեցի այն մարդկանց,
որ աշխարհքիցը տուիր ինձ. քո էին,
և ինձ տուիր նորանց. և քո խօսքը
7 պահեցին։ Հիմա իմացան, որ այն ա-
8 մենն որ ինձ տուիր՝ քեզանից է. Ո-
րովհետեւ այն խօսքն՝ որ ինձ տուիր,
նորանց տուի. և նորանք ընդունե-
ցին, և ճշմարտութեամբ իմացան,
որ քեզանից դուրս եկայ. և հաւա-
տացին, թէ դու ուղարկեցիր ինձ։
9 Ես նորանց համար եմ աղաչում. ոչ
թէ աշխարհքի համար եմ աղաչում.
այլ նորանց համար՝ որ ինձ տուիր,
10 վասն զի քո էին։ Եւ ինչ որ իմն է,

բոլորը քո է. և ինչ որ քո է՝ իմն
է. և ես փառաւորուած եմ նորան-
11 ցում։ Եւ ես՝ այլ ևս աշխարհքումն
չեմ, իսկ նորանք աշխարհքումն են,
և ես քեզ մօտ եմ գալիս. ով Հայր
Սուրբ, պահիր նորանց քո անունովը,
որոնց տուիր ինձ. որ մէկ լինին, ինչ-
12 պէս մենք։ Երբոր աշխարհքումը նո-
րանց հետ էի, ես էի պահում նո-
րանց քո անունովը. նորանց որ տուիր
ինձ, պահեցի, և նորանցից ոչ մէկը
չկորաւ. բայց միայն կորուստի որդին,
13 որ գիրքը կատարուի։ Բայց հիմա
քեզ մօտ եմ գալիս. և այս բանը խօ-
սում եմ աշխարհքումը, որ իմ ու-
րախութիւնը կատարեալ ունենան ի-
14 բանց անձներումը։ Եւ քո խօսքը նո-
րանց տուի, և աշխարհքը նորանց ա-
տեց, քանզի աշխարհքիցը չեն, ինչ-
15 պէս ես էլ աշխարհքիցը չեմ։ Ես չեմ
աղաչում, որ աշխարհքիցը վեր առ-
նես նորանց. այլ որ նորանց պահես
16 չարիցը։ Այս աշխարհքիցը չեն, ինչ-
17 պէս ես էլ աշխարհքիցը չեմ։ Նո-
րանց սուրբ արա քո ճշմարտութիւ-

նովը. քո խօսքը ճշմարտութիւն է։
18 Ինչպէս ինձ ուղարկեցիր աշխարհք,
ես էլ նորանց ուղարկեցի աշխարհք։
19 Եւ ես նորանց վերայ իմ անձը սուրբ
եմ անում, որ նորանք էլ ճշմարտու-
20 թիւնով սրբուած լինին։ Բայց ոչ թէ
միայն նորանց համար եմ աղաչում,
այլ նորանց համար էլ, որ նորանց
21 խօսքովը կ'հաւատան ինձ։ Որ ամեն-
քը մէկ լինին, ինչպէս դու, Հայր,
ինձանում, և ես քեզանում, որ նո-
րանք էլ մեզանում մէկ լինին. որ աշ-
խարհքը հաւատայ, թէ դու ուղար-
22 կեցիր ինձ։ Եւ ես այն փառքն՝ որ
ինձ տուիր՝ նորանց տուի, որ մէկ
23 լինին՝ ինչպէս մենք էլ մէկ ենք։ Ես
նորանցում՝ և դու ինձանում, որ կա-
տարեալ լինին միութիւնում, որպէս
զի աշխարհքը գիտենայ, թէ դու ու-
ղարկեցիր ինձ. և սիրեցիր նորանց՝
24 ինչպէս ինձ սիրեցիր։ Հայր, նորանք
որ ինձ տուիր, կամենում եմ, որ ինչ
տեղ որ ես եմ՝ նորանք էլ ինձ հետ
լինին. որ իմ փառքը տեսնեն, որ
տուիր ինձ. որովհետեւ աշխարհքի

25 հիմնելուցն առաջ սիրեցիր ինձ։ Հայր
արդար. և աշխարհքը չ՚ճանաչեց քեզ.
բայց ես ճանաչեցի քեզ, և սորանք
ճանաչեցին որ դու ուղարկեցիր ինձ։
26 Եւ քո անունը ճանաչեցրի նորանց,
և կ՚ճանաչեցնեմ. որ այն սէրն, ո-
րով ինձ սիրեցիր՝ նորանցում լինի,
և ես էլ նորանցում։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր ա-
շակերտների հետ դուրս գնաց Կեդ-
րոնի ձորի միւս կողմը, որ տեղ մի
պարտէզ կար. որի մէջ մտաւ ինքն և
2 իր աշակերտները։ Յուդան՝ նորան
մատնողն էլ գիտէր այն տեղը. վասն
զի Յիսուսը շատ անգամ ժողովուել
էր այն տեղ իր աշակերտների հետ։
3 Եւ Յուդան զինուորներէ դունդը և քա-
հանայապետներից և փարիսեցիներից
սպասաւորներ առնելով եկաւ այն տեղ
ջահերով և լապտերներով և զէնքե-
4 րով։ Բայց Յիսուսը՝ երբոր տեսաւ
այն ամենն, որ իր վերայ էր գալիս.
դուրս եկաւ նորանց ասաց. Ո՞ւմ էք

5 ուզում։ Պատասխանեցին նորան. Յի-
սուս Նազորեցոյն. Յիսուսը նորանց
ասաց. Ես եմ. Յուդան՝ նորան մատ-
նողն էլ կանգնած էր նորանց հետ։
6 Երբոր ասաց նորանց թէ Ես եմ. ետ
ետ գնացին, և գետնի վերայ ընկան։
7 Եւ դարձեալ հարցրեց նորանց, Ո՞ւմ
էք ուզում. և նորանք ասացին. Յի-
8 սուս Նազորեցոյն։ Յիսուսը պատաս-
խանեց. Ձեզ ասացի թէ Ես եմ. արդ
թէ որ ինձ էք ուզում, թող տուէք
9 դորանց, որ գնան։ Որ կատարուի
այն խօսքն որ ասաց, թէ Նորանց որ
ինձ տուիր, նորանցից ոչ մէկն էլ չը-
10 կորցրի։ Բայց Սիմոն Պետրոսն, որ
սուր ունէր, քաշեց նորան և քահա-
նայապետի ծառային զարկեց, և նո-
րա աջ ականջը կտրեց. և այն ծա-
11 ռայի անունը Մաղքոս էր։ Յիսուսն
էլ Պետրոսին ասաց. Սուրդ դիր իր
պատեանի մէջ. այն բաժակն որ իմ
Հայրը տուաւ ինձ, ես այն չ՚խմե՞մ։
12 Եւ զինուորներէ դունդը և հազարա-
պետը և Հրէաների սպասաւորները
բռնեցին Յիսուսին, և կապեցին նո-

13 րան. Եւ տարան նորան առաջ Ան-
նայի մօտ. քանզի Կայիափայի աներն
էր. որ այն տարուայ քահանայապետն
14 էր։ Սա այն Կայիափան էր, որ Հրէ-
աներին խրատ տուաւ, թէ Լաւ է,
մէկ մարդ կորչի ժողովրդի վերայ։
15 Եւ Սիմոն Պետրոսը և միւս աշակեր-
տը գնում էին Յիսուսի ետեւից։ Այն
աշակերտը ճանաչ էր քահանայապե-
տին, և Յիսուսի հետ մտաւ քահա-
16 նայապետի սրահը։ Պետրոսն էլ դրան
մօտ կանգնած էր դուրսը. այն միւս
աշակերտն, որ քահանայապետին ճա-
նաչ էր, դուրս եկաւ և դռնապանին
ասաց, և Պետրոսին ներս մտցրեց։
17 Եւ այն աղջիկն՝ որ դռնապան էր՝
Պետրոսին ասաց. Չէ՞ որ դու էլ այն
մարդու աշակերտներից ես. և նա
18 ասաց, Չեմ։ Ծառաներն ու սպասա-
ւորներն էլ կանգնել էին՝ կրակ ա-
րած, վասն զի ցուրտ էր, և տաքա-
նում էին. Պետրոսն էլ նորանց հետ
19 կանգնած էր և տաքանում էր։ Եւ
քահանայապետը Յիսուսին հարցրեց
նորա աշակերտների համար, և նորա

20 վարդապետութեան համար։ Յիսուսը
պատասխանեց նորան. Ես յայտնի
խօսեցի աշխարհքին. ես միշտ սովո-
րեցրի ժողովարանումը, և տաճարու-
մը, որ տեղ ամեն տեղից Հրէաները
ժողովվում են, և ծածուկ ոչինչ չը-
21 խօսեցի։ Ինչո՞ւ ես ինձ հարցնում.
լսողներին հարցրու, թէ ինչ խօսե-
ցի նորանց. ահա նորանք գիտեն, ես
22 ինչ եմ ասել։ Երբոր նա սա ասաց,
սպասաւորներից մէկն, որ այն տեղ
կանգնած էր, Յիսուսին ապտակ տը-
ւաւ և ասաց. Այդպէ՞ս ես պատաս-
23 խանում քո քահանայապետին։ Յի-
սուսը նորան պատասխանեց. Եթէ
չար խօսեցի, վկայիր այն չարի հա-
մար. բայց եթէ բարի ասացի, ինչո՞ւ
24 ես զարկում ինձ։ Եւ Աննան նորան
կապած ուղարկեց Կայիափա քահա-
25 նայապետի մօտ։ Եւ Սիմոն Պետրոսը
կանգնած տաքանում էր. նորան ա-
սացին, Չէ՞ որ դու էլ նորա աշակերտ-
ներից ես. նա ուրացաւ և ասաց՝
26 Չեմ։ Եւ քահանայապետի ծառանե-
րից մէկն, որ ազգական էր նորան,

որի ականջը Պետրոսը կտրեց, ասաց.
Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէ-
27 զումը նորա հետ։ Եւ Պետրոսը դարձ-
եալ ուրացաւ. և շուտով հաւը խօսեց։
28 Եւ Յիսուսին Կայիափայի դատնէջը տա-
րան Կոստակէ պալատը. և առաւօտ
էր. և իրանք չ'մտան պալատի մէջ,
որ չ'պղծուին, այլ որ զատիկն ուտեն։
29 Եւ Պիղատոսը դուրս եկաւ նորանց
մօտ և ասաց. Այդ մարդու դէմ ի՞նչ
30 դանդատ էք առաջ բերում։ Պատաս-
խանեցին և ասացին նորան. Եթէ սա
չարագործ չ'լինէր, ապա նորան չ'էինք
31 մատնել քեզ։ Պիղատոսն էլ նորանց
ասաց. Դուք առէք նորան, և ձեր օ-
րէնքի համեմատ դատեցէք նորան։
Հրէաներն էլ նորան ասացին. Մեզ օ-
32 րէնք չէ ոչ ոքի սպանել։ Որ Յիսուսի
խօսքը կատարուի, որ ասաց, ցոյց տա-
լով՝ թէ ինչպիսի մահով է մեռնելու։
33 Պիղատոսը դարձեալ մտաւ պալատը,
Յիսուսին կանչեց և նորան ասաց.
34 Դո՞ւ ես Հրէաների թագաւորը։ Յի-
սուսը նորան պատասխանեց. Դու քե-
զա՞նից ես ասում այդ, թէ ուրիշ-

35 ներն ասացին քեզ ինձ համար։ Պի-
զատոսը պատասխանեց. Միթէ ե՞ս
էլ Հրէայ եմ. քո ազգը և քահանա-
յապետները քեզ մատնեցին ինձ. ի՞նչ
36 ես արել։ Յիսուսը պատասխանեց.
Իմ թագաւորութիւնն այս աշխարհ-
քից չէ. եթէ իմ թագաւորութիւնն
այս աշխարհքից լինէր, ապա ծառա-
ներս կռիւ կ'անէին որ չ'մատնուիմ
Հրէաների ձեռքը. բայց հիմա իմ
37 թագաւորութիւնն այս տեղից չէ։ Պի-
զատոսն էլ ասաց նորան. Ապա ու-
րեմն դու թագաւոր ես. պատասխա-
նեց Յիսուսը. Դու ես ասում որ ես
թագաւոր եմ. ես դորա համար եմ
ծնուել և եկել աշխարհք, որ ճշմար-
տութեանը վկայեմ. ամեն ով որ ճըշ-
մարտութիւնից է՝ իմ ձայնին լսում
38 է։ Պիղատոսը նորան ասաց. Ի՞նչ է ճըշ-
մարտութիւնը։ Եւ սա ասելով դարձ-
եալ դուրս գնաց Հրէաների մօտ և
նորանց ասաց. Ես ոչ մի յանցանք
39 չեմ գտնում նորանում։ Բայց ձեզ
սովորութիւն է, որ զատկին մի մարդ
արձակեմ ձեզ համար. արդ կամե-

նո՞ւմ էք, որ Հրէաների թագաւորն
40 արձակեմ ձեզ համար։ Եւ ամենքն
դարձեալ աղաղակեցին և ասում է-
ին, Ոչ թէ դորան՝ այլ Բարաբբային.
և այդ Բարաբբան մի աւազակ էր։

ԳԼ. ԺԹ.

1 Այն ժամանակ առաւ Պիղատոսը Յի-
2 սուսին և ծեծեց։ Եւ զինուորները
փշերից պսակ շինեցին, նորա գլխին
դրին, և ծիրանի հանդերձ հագցրին
3 նորան։ Եւ ասում էին. Ողջ կաց,
Հրէից թագաւորը. և ապտակներ էին
4 տալիս նորան։ Պիղատոսը դարձեալ
դուրս գնաց և նորանց ասաց. Ահա
նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ
գիտենաք թէ՝ ես ոչ մի յանցանք չեմ
5 գտնում նորանում։ Եւ Յիսուսը դուրս
եկաւ և փշեղէն պսակն և ծիրանի հա-
գուստը հագած. և նորանց ասաց.
6 Ահա այն մարդը։ Երբոր քահանայա-
պետները և սպասաւորները նորան
տեսան, աղաղակեցին՝ և ասացին.
Խաչիր խաչիր։ Պիղատոսը նորանց ա-
ասաց. Դուք առէք դորան, և խաչե-

ցէք. վասն զի ես յանցանք չեմ դտա-
7 նում դորանում։ Հրէաները պատաս-
խանեցին նորան. Մենք օրէնք ու-
նինք, և մեր օրէնքի համեմատ պէտք
է մեռնի. վասն զի իր անձն Աստու-
8 ծոյ Որդի արաւ։ Երբոր Պիղատոսը
այս խօսքը լսեց, էլ աւելի վախեցաւ։
9 Եւ դարձեալ մտաւ պալատը, և Յի-
սուսին ասաց. Դու ի՞նչ տեղից ես. և
10 Յիսուսը չպատասխանեց նորան։ Պի-
ղատոսն էլ ասաց նորան. Ինձ հետ չե՞ս
խօսում. մի՞թէ չես գիտում, որ իշ-
խանութիւն ունիմ քեզ խաչելու, և
իշխանութիւն ունիմ քեզ արձակելու։
11 Յիսուսը պատասխանեց. Դու ոչինչ
իշխանութիւն չէիր ունենալ ինձ վե-
րայ, եթէ վերեւից տրուած չլիներ
քեզ. նորա համար՝ նա որ ինձ մատ-
նեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ
12 է։ Եւ նորանից յետոյ Պիղատոսն ու-
զում էր նորան արձակել. բայց Հրէ-
աներն աղաղակում էին և ասում.
Եթէ դորան արձակես՝ կայսերի բա-
րեկամ չես. ամեն ով որ իր անձը
թագաւոր է կոչում, նա կայսերին

13 հակառակ է։ Պիղատոսն էլ երբոր այս
խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ,
և բեմի վերայ նստեց, այն տեղն՝ որ
Քարայատակ էր կոչվում, և Եբրա-
14 յեցերէն Կաբբաթա։ Եւ զատկի ուր-
բաթն էր՝ ժամը իբր վեցը, և Հրէաներ-
15 ին ասաց. Ահա ձեր թագաւորը։ Իսկ
նորանք աղաղակում էին, Վեր առ,
վեր առ՝ և խաչիր դորան. Պիղատոսը
նորանց ասաց. Ձեր թագաւո՞րը խա-
չեմ։ Քահանայապետները պատասխա-
նեցին. Մենք թագաւոր չունինք բա-
16 յի Կայսերից։ Այն ժամանակ նորան
տուաւ նորանց ձեռքը որ խաչուի։
17 Եւ նորանք առին տարան Յիսու-
սին. և խաչափայտն ինքն վերկալած,
դուրս գնաց այն տեղն, որ գագա-
թան էր ասվում, որ Եբրայեցերէն
18 գողգոթա է կոչվում։ Այն տեղ խաչ
հանեցին նորան. և նորա հետ երկու
ուրիշն՝ այս կողմը և այն կողմը, և
19 Յիսուսին մէջ տեղը։ Պիղատոսը մի
տախտակ էլ գրեց, և խաչի վերայ
դրաւ. և գրուած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱ-
20 ԶՈՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Եւ այս

տախտակը Հրէաներից շատերը կար-
դային. վասն զի քաղաքին մօտ էր
այն տեղն որ Յիսուսը խաչուեցաւ. և
գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն
21 և Լատիներէն։ Եւ Հրէաների քահա-
նայապետներն ասացին Պիղատոսին.
Մի գրեր թագաւոր Հրէից, այլ թէ
նա ասաց, Ես թագաւոր եմ Հրէից։
22 Պիղատոսը պատասխանեց. Ինչ որ
գրեցի՝ գրեցի։
23 Բայց զինուորներն՝ երբոր Յիսուսին
խաչ հանեցին, նորա հանդերձներն
առին՝ և չորս բաժին արին, ամեն
մէկ զինուորի համար մի բաժին. բայց
պատմուճանը՝ որովհետև առանց կա-
րի էր, վերեւից վայր բոլորը հիւս-
24 ուած. Ուստի իրար ասացին. Դորան
չպատառենք, այլ վիճակ գցենք դո-
րա վերայ, թէ ումը լինի. որ գիրքը
կատարուի, որ ասում է. Թէ իմ հան-
դերձներն իրանց մէջ բաժանեցին և
իմ պատմուճանի վերայ վիճակ գցե-
ցին. և զինուորներն արին այդ բանը։
25 Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած
էին նորա մայրը, և նորա մօր քոյրը՝

Մարիամ Կղէօպայի կնոջ, և Մարիամ
26 Մագդալենացին։ Յիսուսն էլ տեսնելով իր մօրը և այն աշակերտին՝ որ սիրում էր, որ մօտիկ կանգնած էր, իր մօրն ասաց. Ով կին, ահա քո որ-
27 դին։ Յետոյ ասաց աշակերտին. Ահա քո մայրը. և այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ առաւ նորան։
28 Յորանից յետոյ Յիսուսը իմանալով, որ ամեն բան արդէն կատարուած է, որպէս զի գիրքը կատարուի, ասաց.
29 Ծարաւ եմ։ Եւ մի ման կար քացախով լիքն. և նորանք մի սպունգ լցրին քացախով և զոպայի մշտիկի վերայ
30 դրած նորա բերանին մօտեցրին։ Եւ երբոր Յիսուսը քացախն առաւ՝ ասաց։ Կատարուած է. և գլուխը խոնարհեցրեց հոգին աւանդեց։
31 Բայց Հրէաները, որովհետեւ ուրբաթ օր էր, որպէս զի մարմինները չ՚մնան խաչի վերայ շաբաթ օրը, վասն զի այն շաբաթ օրը մեծ օր էր, Պիղատոսին աղաչեցին, որ նորանց սրունքները ջարդեն. և վեր առ-
32 նուին։ Զինուորներն էլ եկան և ա-

ռաջինի սրունքները ջարդեցին, այն-
33 պէս էլ միւսինը որ նորա հետ խաչուած էր։ Բայց երբոր Յիսուսի մօտ եկան և տեսան նորան արդէն մեռած, նորա սրունքները չջարդեցին։
34 Այլ զինուորներից մէկը գեղարդով նորա կողը խոցեց, և շուտով արիւն
35 և ջուր դուրս եկաւ։ Եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց. և նորա վկայութիւնը ճշմարիտ է. և նա գիտէ որ ճշմարիտ է ասում, որ դուք հաւատաք։
36 Վասն զի սա եղաւ, որ գիրքը կատարուի, Ոչ Նորա ոսկորը չպիտի
37 փշրուի։ Եւ դարձեալ մի ուրիշ գիրք ասում է, Ոչ Մտիկ կ՚տան նորան, որ խոցեցին։
38 Յորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յոսէփը, որ Արիմաթեայեցն էր, (որ աշակերտ լինելով Յիսուսին, բայց Հրէից վախին պատճառովը ծածկուած էր) որ Յիսուսի մարմինն վեր առնէ. և Պիղատոսը հրաման տուաւ. և նա եկաւ և վեր առաւ Յիսուսի մարմի-
39 նը։ Նիկոդիմոսն էլ եկաւ՝ (որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերով.) և

զմուռս բերաւ հալուէի հետ խառ-
40 նած՝ հարիւր լտրի չափ։ Եւ Յիսուսի
մարմինն առին, և այն խնկերի հետ
կտաւներով պատեցին, ինչպէս Հրէա-
41 ներին օրէնք էր պատել։ Եւ այն տե-
ղը, որ խաչուեցաւ, մի պարտէզկար,
և այն պարտէզումը մի նոր դերեզ-
ման, որում երբէք ոչ ոք չէր դըր-
42 ուած։ Եւ այն տեղ դրին Յիսուսին
Հրէաների ուրբաթի համար, որով-
հետեւ դերեզմանը մօտ էր։

ԳԼ. Ի

1 Եւ մէկշաբթի օրը Մարիամ Մագ-
դալենացին առաւօտանց՝ տակաւին
մութ՝ գալիս է դերեզմանը, և տես-
նում քարը դերեզմանից վեր առած։
2 Ապա վազում է գալիս Սիմոն Պետ-
րոսի և միւս աշակերտի մօտ, որին
Յիսուսը սիրում էր, և ասում նո-
րանց. Տիրոջը վեր առին դերեզմա-
նից, և չենք գիտում, ՝Ի՞ որ տեղ
3 դրին նորան։ Եւ դուրս եկաւ Պետ-
րոսը և միւս աշակերտը, և գալիս
4 էին դերեզմանը։ Եւ երկուքը միա-

սին վազում էին. և միւս աշակերտը
վազեց շուտով անցաւ Պետրոսից, և
5 առաջ եկաւ դերեզմանը։ Եւ ծռելով
տեսնում է կտաւները դրած. բայց
6 ներս չմտաւ։ Սիմոն Պետրոսն էլ հա-
սաւ որ նորա ետեւից գալիս էր, և
մտաւ դերեզմանը, և տեսնում է
7 կտաւները դրած. Եւ վարշամակն՝ որ
նորա գլխի վերայ էր, կտաւների հետ
չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ։
8 Այն ժամանակ միւս աշակերտն էլ
ներս մտաւ, նա որ առաջ էր դե-
րեզմանը եկել, տեսաւ և հաւատաց։
9 Վասն զի տակաւին չէին գիտում գիր-
քը, թէ Պէտք է նա մեռելներից
10 յարութիւն առնէ։ Եւ աշակերտներն
դարձեալ իրար մօտ եկան։
11 Բայց Մարիամը դերեզմանի մօտ
կանգած էր դուրսը և լաց էր լինում.
և լաց լինելիս ծռեց ՝Ի՞ պառաւ դե-
12 րեզմանի մէջ։ Եւ տեսնում է երկու
հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով
նստած, մէկը գլխի կողմը և միւսը
ոտների կողմը, որ տեղ Յիսուսի մար-
13 մինը դրուած էր։ Եւ նորանք ասա-

ցին Նորան։ Ով կին, ինչո՞ւ ես լայ
լինում։ Նորանց ասաց։ Նորա համար
որ իմ Տիրոջը վեր առին, և չգի-
14 տեմ՝ թէ ուր դրին Նորան։ Եւ եր-
բոր սա ասաց, դարձաւ իր յետին
կողմը, և Յիսուսին տեսաւ՝ կանգ-
15 նած։ և չգիտեր թէ Յիսուսն է։ Յի-
սուսը Նորան ասաց։ Կին, ինչո՞ւ ես
լայ լինում, ո՞ւմ ես որոնում։ Նա էլ
կարծելով թէ պարտիզպանն է, ա-
սաց Նորան։ Տէր, եթէ դու վեր ա-
ռիր Նորան, ասա ինձ՝ ո՞ւր ես դրել
Նորան, որ ես վեր առնեմ Նորան։
16 Յիսուսը Նորան ասաց։ Մարիամ։ և
նա դարձաւ և ասաց Նորան։ Ռաբ-
բունի, որ կ'թարգմանուի վարդա-
17 պետ։ Յիսուսը Նորան ասաց։ Մի
դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ
վեր ելել իմ Հօր մօտ։ բայց դու
գնա իմ եղբայրների մօտ, և Նորանց
ասա։ Ես վեր եմ ելում իմ Հօր
մօտ՝ և ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ
18 մօտ և ձեր Աստուծոյ մօտ։ Մարիամ
Մագդալենացին գալիս է աշակերտ-
ներին պատմում, թէ Տեսաւ Տիրոջը
և այս բանն իրան ասաց։

19 Եւ մէկշաբթի օրը, երբոր իրիկուն
էր՝ և դռները փակուած, այն տեղ որ
աշակերտները ժողովուած էին Հրէա-
ների վախից, Յիսուսը եկաւ և Նո-
րանց մէջ կանգնեց, և Նորանց ա-
20 սաց։ Խաղաղութիւն ձեզ։ Եւ սա ա-
սելով, իր ձեռները և իր կողը ցոյց
տուաւ Նորանց։ և աշակերտներն ու-
21 րախացան՝ երբոր Տիրոջը տեսան։ Յի-
սուսը դարձեալ ասաց Նորանց։ Խա-
ղաղութիւն ձեզ, ինչպէս իմ Հայրն
ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ու-
22 ղարկում։ Եւ սա ասելով փչեց Նո-
րանց վերայ և ասաց։ Առէք Սուրբ
23 Հոգին։ Որոնց մեղքը որ թողէք՝
թողուած կ'լինի Նորանց։ որոնցը որ
բռնէք՝ բռնուած կ'լինի։
24 Բայց Թովմասը՝ տասներկուսից մէկը՝
Երկուորեակ կոչուածը, Նորանց հետ
25 չէր, երբոր Յիսուսը եկաւ։ Միւս ա-
շակերտներն ասում էին Նորան։ Ըէ
Տիրոջը տեսանք։ իսկ նա ասաց Նո-
րանց։ Եթէ Նորա ձեռներումն բե-
ւեռների նշանը չտեսնեմ, և իմ մա-
տը չդնեմ բեւեռների տեղը, և իմ

ձեռքը չկոխեմ նորա կողը, չեմ հաւատալ։
26 Եւ ութ օրից յետոյ աշակերտները դարձեալ ներսումն էին, և Թոմասն էլ նորանց հետ. Յիսուսը՝ դուռները փակ լինելով՝ եկաւ և նորանց միջումը կանգնեց և ասաց. Խաղաղութիւն
27 ձեզ։ Յետոյ Թոմասին ասաց. Բեր քո մատը այս տեղ, և տես իմ ձեռները, և քո ձեռքը բեր՝ և իմ կողը կոխիր, և մի լինիր անհաւատ՝ այլ
28 հաւատացեալ։ Եւ Թոմասը պատասխանեց և ասաց նորան. Իմ Տէրը,
29 և իմ Աստուածը։ Յիսուսը նորան ասաց. Որովհետեւ տեսար ինձ՝ հաւատացիր. երանի նորանց, որ չեն տեսնում և հաւատում են։
30 Յիսուսն ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշակերտների առջեւ, որ չեն
31 գրուած այս գրքումը։ Բայց սորանք գրուեցան՝ որ հաւատաք, թէ Յիսուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. և որ հաւատալով կեանք ունենաք նորա անունովը։

Գլ. ԻԱ.

1 Սորանից յետոյ Յիսուսը դարձեալ իր անձը յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եզրին մօտ. և այս-
2 պէս յայտնեց։ Միասին էին Սիմոն Պետրոսը, և Երկուորեակ անուանուած Թոմասը, և Նաթանայէլն՝ որ Գալիլեայի Կանայիցն է, և Զեբեդեայի որդիքը, և նորա աշակերտներից-
3 ուրիշ երկուք էլ։ Սիմոն Պետրոսը նորանց ասաց. Գնում եմ ձուկ բռնելու. նորան ասացին. Մենք էլ գանք քեզ հետ. գնացին և շուտով մտան նաւը, և այն գիշերը ոչինչ չբռնե-
4 ցին։ Երբոր արդէն առաւօտ եղաւ, Յիսուսը ծովի եզրումը կանգնած էր, սակայն աշակերտները չճանաչեցին,
5 թէ Յիսուսն է։ Իսկ Յիսուսը նորանց ասաց. Տղայք, ուտելու բան ունի՞ք.
6 պատասխանեցին նորան. Ոչ։ Նա էլ ասաց նորանց. Ուռկանը նաւի աջի կողմը գցեցէք, և կ'գտնէք. նորանք էլ գցեցին, և՝ էլ չէին կարողանում քաշել՝ ձկների շատութեան պատճա-

7 ռովը։ Այն աշակերտն՝ որ Յիսուսը
սիրում էր նորան՝ Պետրոսին ասաց.
Տէրն է նա։ Սիմոն Պետրոսն երբոր
լսեց՝ Տէրն է, վերարկուն իրան վե-
րայ առաւ, քանզի մերկ էր, և ձին-
8 քին ծովը դցեց։ Իսկ միւս աշակերտ-
ները գալիս էին նաւակովն. վասն
զի ցամաքիցը հեռու չէին, այլ երկու
հարիւր կանգունի չափ, և ուռկանը
9 ձկներովը քաշում էին։ Երբոր դուրս
եկան ցամաքը, տեսան ածուխի կը-
րակ վառած, և նորա վերայ ձուկ
10 դրած և հաց։ Յիսուսը նորանց ա-
սաց. Բերէք այդ ձկներից՝ որ հիմա
11 բռնեցիք։ Սիմոն Պետրոսը մտաւ և
ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝ մեծ
մեծ ձկներով լիքն՝ հարիւր յիսուն և
երեք հատ. և այդքան լինելով՝ դոր-
12 ծիքը չ'պատառուեցաւ։ Յիսուսը նո-
րանց ասաց. Եկէք ճաշեցէք. և ա-
շակերտներիցը ոչ ով չէր համարձա-
կում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. վասն
13 զի գիտէին, որ Տէրն է։ Յիսուսն էլ
եկաւ՝ և հացն առաւ՝ և նորանց տը-
14 ւաւ, և նոյնպէս էլ ձուկը։ Սա եր-

բորդ անգամը է որ Յիսուսը իր ա-
շակերտներին երեւեցաւ, մեռելներից
յարութիւն առնելուց յետոյ։
15 Եւ երբոր ճաշեցին, Յիսուսը ասաց
Սիմոն Պետրոսին. Սիմոն Յոնանի որ-
դի, սիրո՞ւմ ես ինձ դորանցից աւե-
լի. Նորան ասաց. Այո, Տէր, դու
գիտես՝ որ սիրում եմ քեզ. Նորան
ասաց. Արածեցրու իմ գառները։
16 Դարձեալ ասաց նորան. Սիմոն Յոնա-
նի որդի, սիրո՞ւմ ես ինձ. Նորան ա-
սաց. Այո, Տէր, դու գիտես որ սի-
րում եմ քեզ. Նորան ասաց. Արա-
17 ծեցրու իմ ոչխարները։ Երրորդ ան-
գամն ասաց նորան. Սիմոն Յոնանի
որդի, սիրո՞ւմ ես ինձ։ Պետրոսը տրտ-
մեցաւ. որովհետեւ երրորդ անգամ
նորան ասաց՝ Ի՞ սիրո՞ւմ ես ինձ. և
նորան ասաց. Տէր, դու ամեն բան
գիտես, դու գիտես, որ սիրում եմ
քեզ. Յիսուսը նորան ասաց. Արածեց-
18 րու իմ ոչխարները։ Ճշմարիտն ճշմա-
րիտն ասում եմ քեզ. երբոր պատա-
նի էիր՝ ինքդ էիր գօտիդ կապում՝ և
ման գալիս որ տեղ որ ուզում էիր.

բայց երբոր կ՚ծերանաս, ձեռքերդ կը-
մեկնես. և ուրիշը գօտի կ՚կապէ, և
19 կ՚տանէ՝ որ տեղ որ չես ուզիլ։ Յա ա-
սաց՝ ցոյց տալով թէ նա ի՞նչ մահով
կ՚փառաւորէ Աստուծոյն. և սա ասե-
լուց յետոյ, նորան ասաց. Իմ ետե-
20 ւից եկ. Պետրոսն էլ դարձաւ՝ տեսաւ
այն աշակերտին, որին Յիսուսը սի-
րում էր, որ ետեւիցը գալիս էր, նա՝
որ էլ նորա լանջքովն ընկաւ և ա-
21 սաց. Տէր, ո՞վ է քեզ մատնողը։ Պետ-
րոսը սորան տեսնելով, Յիսուսին ա-
22 սաց. Տէր, բայց սա ի՞նչ։ Յիսուսը
նորան ասաց. Եթէ կամենում եմ, որ
դա կենայ, մինչեւ որ գամ. քեզ
23 ի՞նչ, դու իմ ետեւից եկ։ Եւ այս
խօսքը դուրս եկաւ եղբայրների մէջ,
թէ այն աշակերտը չի մեռնիլ. և Յի-
սուսը չասաց նորան, թէ չի մեռնիլ.
այլ՝ եթէ կամենում եմ որ դա կե-
նայ մինչեւ ես գամ. քեզ ի՞նչ։
24 Սա այն աշակերտն է, որ այս բա-
ների համար վկայում է, և այս բա-
ներն էլ գրեց, և գիտենք որ նորա
25 վկայութիւնը ճշմարիտ է։ Բայց ուրիշ

էլ շատ բաներ կան, որ Յիսուսը ա-
րաւ, որոնք եթէ մէկ մէկ գրուած
լինէին, կարծում եմ թէ աշխարհքս
էլ բաւական չէր լինիլ այն գրուած
գրքերը տանելու։ Ամէն։





001480Z

2001

<< Ազգային գրադարան >>

NL0014802

2013

208.
4 - 7